

ԱՄՆ Արձանագրեց՝ Արցախի Մէջ Սրբավայրերը Վտանգի Տակ ԵՆ



Միացեալ Նահանգները Ատրպէյճանը ընդգրկած է Կրօնական ազատութեան դիտարկման ցանկին մէջ՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վերահսկողութիւն հաստատելէ յետոյ կրօնական ազատութեան լուրջ խախտումներու մէջ ներգրաւուած ըլլալու կամ զանոնք հանդուրժելու համար:

Պետական քարտուղար Էնթրիք Պլինքըն նախօրէին յայտնած է, որ Ատրպէյճանէն բացի ցանկին մէջ ընդգրկուած են նաեւ Կեղրոնափրիկեան Հանրապետութիւնը, Քոմորոսը եւ Վիեթնամը:

Պաշտոնական Ուաշինգթընի այս որոշումը յաջորդած է Լեռնային Ղարաբաղի մէջ քրիստոնէական սրբավայրերու պահպանման առնչութեամբ Միջազգային կրօնական ազատութեան հարցերով Միացեալ Նահանգներու յանձնաժողովի բարձրաձայնած մտահոգութիւններուն:

2023 թուականի Սեպտեմբեր 19-20-ին Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի իրականացուցած ռազմական յարձակման հետեւանքով Արցախի գրեթէ ամբողջ հայ բնակչութիւնը՝ շուրջ 105 հազար մարդ, ստիպուած եղաւ հեռանալ Հայաստան:

Ամերիկեան յանձնաժողովը տազնապ հնչեցուցած է նաեւ Իլհամ Ալիեւի դեկլարացիոն՝ մասնատուութեան մեծամասնութիւն ունեցող երկրին մէջ կրօնական գործունէութեան կարգաւորումներու առնչութեամբ, այդ շարքին՝ կրօնական կազմակերպութիւններու գրանցման եւ պաշտօնական մարմինի կողմէ անոնց գրականութեան հաստատման պահանջներու:

Պլինքըն յայտնած է նաեւ, որ բացի «յատուկ դիտարկման ցանկէն», եւս 12 երկիր կրօնական ազատութեան առումով «առանձնապատուկ մտահոգութիւն» կը յարուցէ, անոնք են՝ Պիրման, Չինաստանը, Քուպան, Էրիթրեան, Իրանը, Նիքարագուան, Հիւսիսային Քորէան, Փաքիստանը, Ռուսաստանը, Սէուտական Արաբիան, Տաիվանը եւ Թուրքմենիստանը: Նախորդ տարուայ համեմատ այս ցանկին մէջ փոփոխութիւններ չկան:

ՀՀ Արտաքին Քաղաքականութեան Նպատակը Հայաստանի Անկախութիւնը Ու Տարածքային Անբողջականութիւնը Ապահովելն Է. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Արտաքին գործերու նախարարութիւն՝ գերատեսչութեան 2023 թ. գործունէութեան հաշուետուութիւնը քննարկելու նպատակով:

Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան եւ նախարարի տեղակալները ներկայացուցած են իրենց համակարգման ուղղութիւններով կատարուած աշխատանքները, ընթացիկ եւ չորդ տարուայ համար նախանշող ծրագրերն ու առաջնահերթութիւնները:

Համապատասխանաբար, հանգամանալից անդրադարձ կատարուած է աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային զարգացումներով յատկանշական 2023 թուականի ընթացքին ՀՀ արտաքին քաղաքական գերակայութիւններու կենսի կոչման ուղղութեամբ իրականացուած միջոցառումներուն, ձեռքբերումներուն, ինչպէս նաեւ մարտահրաւէրներու յաղթահարման նպատակով ձեռնարկուած քայլերուն:

Անդրադարձ կատարուած է 2023 թ. ընթացքին, մասնաւորապէս, տարեսկիզբէն Լաչինի միջանցքի արգելափակման, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին նկատմամբ Ատրպէյճանի ցեղային գտման քաղաքականութեան պայմաններուն



Փաշինեան արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի եւ նախարարի տեղակալներուն հետ հանդիպումի ընթացքին

մէջ, Սեպտեմբերին ռազմական յարձակման հետեւանքով ստեղծուած իրավիճակին մէջ ՀՀ-ի կողմէ իրականացուած քայլերուն: Դիտարկուած են ԼՂ-էն բռնի տեղահանուած աւելի քան 100 հազար հայ բնակչութեան իրաւունքներու եւ կարիքներու հասցեագրման աշխատանքները եւ այդ ուղղութեամբ միջազգային գործընկերներու հետ փոխգործակցութեան հարցեր:

Անդրադարձ կատարուած է Հարաւային Կովկասի մէջ կայունութեան եւ խաղաղութեան ապա-

հովման ուղղութեամբ ջանքերուն եւ գործընթացներուն:

ՀՀ վարչապետին ներկայացուած են երկկողմ մակարդակով գործընկեր պետութիւններու հետ համագործակցութեան ամրապնդման ուղղութեամբ իրականացուած քայլերը, առկայ արդիւնքները: Ընդգծուած է, որ ՀՀ ԱԳՆ ջանքերը միտուած եղած են սերտացնելու փոխգործակցութիւնը լայն աշխարհագրութեամբ՝ ինչպէս հարեւան եւ այն պետութիւններու հետ, որոնց պարագային արդէն իսկ ձեւաւորուած են բարեկամական կապեր,

«Հայկական Մեղեդիներ» Վարդասայլը Արժանացաւ Վարդերու Փառատօնի «Grand Marshal» Արցանակին

Եար.Պ էջ 6



Հայկական վարդասայլը կը տողանցէ Փասատինայի «Քոլորատօ» պողոտային վրայ

«Հայկական Մեղեդիներ» անունը կրող վարդասայլը մասնակցելով Վարդերու 135-րդ տարեկան փառատօնին, արժանացաւ գլխաւոր՝ «Grand Marshal» մրցանակին:

Ամեն տարի Փասատինայի մէջ տեղի ունեցող այս փառատօնին հայկական վարդասայլը կը մասնակցէր 6-րդ անգամ ըլլալով:

«Հայկական Մեղեդիներ» վարդասայլը կը խորհրդանշէր

Հայ մայրերու հերոսութիւնները՝ վճռակամութեամբ, դիմադրողականութեամբ եւ ամբողջութեամբ, ընդդէմ դարերու ընթացքին վերիվայրումներուն՝ ոգեշնչելով իրենց ընտանիքները:

Վարդերու Փառատօնին ներկայ եղան հարիւր հազարաւոր ժողովուրդ, իսկ հետատեսիլի վրայ դիտուեցաւ միլիոնաւորներու կողմէ՝ Ամերիկայի ամբողջ տարածքին:

2023 Թուականին Հայաստան Այցելած Է 2 Միլիոն 300 Հազար Զբօսաշրջիկ

«2023 թուականին ունեցած ենք 2 միլիոն 300 հազար զբօսաշրջիկ, մտաւորապէս 20 տոկոս աճ՝ 2019 թուականի համեմատ եւ 39 տոկոս աճ՝ 2022 թուականի համեմատ», ամփոփելով 2023 թուականի զբօսաշրջային տարին՝ այս մասին յայտնեց Տնտեսութեան նախարարութեան Զբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Սիսիան Պողոսեանը:

Ան նշեց, որ զբօսաշրջիկներուն 50 տոկոսը եկած է Ռուսաստանէն, երկրորդ եւ երրորդ տեղերուն վրայ են Վրաստանն ու Իրանը: Այնուհետեւ շատ եկած են ԱՄՆ-էն սփիւռքահայերը:

«Հնդկաստանէն բաւականին զբօսաշրջիկ ունինք այս պահին, որ կու գան Տուպայէն: Գերմանիան, Ֆրանսան եւս կը շարունակեն ըլլալ կարեւոր թիրախային շուկաներ մեզի համար: Չինաստանը առաջին 10 երկիրներուն մէջ է», ըսաւ Սիսիան Պողոսեանը:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռուսաստանի Հետ Յարաբերութիւնների Կատարացումը Չի Կարող Նպաստել Հայաստանի Անվտանգութեանը

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՕՂՈՍԵԱՆ

2023-ը հայ-ռուսական յարաբերութիւնների համար թեւեւ ամենածանր տարին էր Հայաստանի անկախութեան ձեռքբերումից ի վեր: 2020-ի Արցախեան պատերազմից եւ Հայաստանի ինքնիշխան տարածք Ատրպէյջանի ռազմական ներխուժումներից յետոյ հայ-ռուսական յարաբերութիւնները զգալի անկում են արձանագրել: Հայաստանը բացայայտ դժգոհ է Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի դիրքորոշումից՝ համարելով, որ Ռուսաստանը չի կատարել իր դաշնակցային պարտաւորութիւնները: Ռուսաստանը, իր հերթին, Եւրամիութեան եւ ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնները զարգացնելու Հայաստանի քաղաքականութեանը կասկածանքով է վերաբերում եւ համարում է, որ Հայաստանը փորձում է աստիճանաբար հեռանալ իրենից:

Ռուսաստան-Արեւմուտք ընթացող փաստացի հակամարտութիւնն աւելի է բարդացնում իրավիճակը: ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի հետ շփումներն ակտիւացնելու Հայաստանի ցանկացած փորձ Ռուսաստանում ընկալւում է «դաւաճանութիւն», իսկ ռուս որոշ փորձագէտներ Հայաստանին մեղադրում են «Ուքրանիայի ճանապարհն ընտրելու մէջ»:

Այսուհանդերձ, երկկողմ տնտեսական կապերը բուռն զարգացում են ապրում: 2023-ին երկկողմ առեւտրաշրջանառութիւնը կարող է հասնել 6 մլրդ. տոլարի, ինչն աննախադէպ ցուցանիշ է երկու պետութիւնների համար: Դա մասամբ պայմանավորւած է Հայաստանից Ռուսաստան ար-

տահանման կտրուկ աճով: Այստեղ հական դեր են խաղում նաեւ Հայաստանից Ռուսաստան դրամական փոխանցումները, ինչպէս նաեւ Ուքրանիայում պատերազմի բռնկումից յետոյ Հայաստան տեղափոխուած տասնեակ հազարաւոր ռուսերը:

Միեւնոյն ժամանակ, չնայած Ռուսաստանի մօտալուտ պարտութեան մասին բազմաթիւ պնդումներին՝ Ուքրանիայում պատերազմն առայժմ հեռու է աւարտելուց, իսկ 2023-ին ուքրանական հակադրական ճախողումից յետոյ յուսմամբ կատարուած նախաձեռնութիւնն անցել է Ռուսաստանի կողմը: Ուքրանիայում ռազմական յաջողութիւնները, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի աճող դերը Ռուսաստանի համար՝ որպէս Ասիային եւ Մերձարեւելքին կապող լոճիստիկ հանգույցի, կարող են յանգեցնել տարածաշրջանում ռուսական դերի աւելացմանը:

Ստեղծուած պայմաններում Ռուսաստանի հետ յարաբերութիւնների շարունակական վատթարացումը որեւէ կերպ չի կարող նպաստել Հայաստանի անվտանգութեան մակարդակի բարձրացմանը: Վերջին շրջանում նկատելի են Ատրպէյջանի փորձերը՝ Հայաստանը ներկայացնելու որպէս տարածաշրջանում թիւ մէկ արեւմտամէտ պետութիւն, որը քայլեր է ձեռնարկում Արեւմուտքի ներկայութիւնն ամրապնդելու ուղղութեամբ: Այս քաղաքականութեամբ Ատրպէյջանը ձգտում է յաւելել լարուածութիւնն առաջացնել հայ-ռուսական ու հայ-իրանական յարաբերութիւններում՝ փորձելով հասնել տարա-

ծաշրջանում Հայաստանի լիարժէք մեկուսացմանը եւ աւելի մեծացնել Հայաստանի խոցելիութեան մակարդակը: Ատրպէյջանի նպատակն է, թերեւս, Հայաստանը վերածել Արեւմուտք-Ռուսաստան հակամարտութեան նոր օճախի:

Ատրպէյջանն օգտուում է նաեւ Ռուսաստանի համար Պաքուի եւ Անքարայի աճող կարեւորութիւնից՝ Ռուսաստանին ակնարկելով, որ Հայաստանն արդէն դաւաճանել է Մոսկուային եւ Հարաւային Կովկասում ռուսական շահերի պաշտպանութեան լաւագոյն ճանապարհը ռուս-ատրպէյջանական ռազմավարական համագործակցութիւնն է, իսկ Հայաստանի շահերը հանգիստ կարելի է ոտնահարել:

Այս արհաւիրք քաղաքական ցնցումների պայմաններում Հայաստանը պէտք է չափազանց զգուշ գործի՝ ճակատագրական նոր սխալներ թոյլ չտալու համար: Վերջին չորս տարիների ընթացքում Հայաստանի անվտանգութեան մակարդակն էականորէն նուազել է եւ արտաքին քաղաքականութեան ոլորտում ցանկացած սխալ քայլ կարող է անդառնալի հետեւանքներ ունենալ: Առաջին հերթին Հայաստանը պէտք է յստակ ուղերձ յղի թէ՛ ռուսական, թէ՛ արեւմտեան գործընկերներին, որ որեւէ ցանկութիւն չունի դառնալու «Ռուսաստան - Արեւմուտք, ժողովրդավարութիւն - աւտորիտարիզմ» իրական կամ թուացեալ հակամարտութեան մաս: Ռուսաստանի հետ շփումներում պէտք է առաջ տանել այն տեսակէտը, որ Հայաստանը չի պատրաստուում որեւէ

մէկին աջակցել տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու գործում եւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան բազմազանեցումը չի նշանակում հակառուսական քաղաքականութեան որդեգրում:

Դա չի նշանակում նաեւ, որ Հայաստանը չպէտք է շարունակի Արեւմուտքի հետ յարաբերութիւնները խորացնելու ռազմավարութիւնը: Ընդամէնը պէտք է խուսափել հակառուսական ժեստերից, որոնք Հայաստանին ոչնչով չեն կարող օգնել: Միեւնոյն ժամանակ, Հայաստանը պէտք է քայլեր ձեռնարկի ռուսական փորձագիտական եւ մետրա դաշտում սեփական ներկայացուածութեան մեծացման ուղղութեամբ: Ներկայում այնտեղ Ատրպէյջանն ունի քաղաքացի գերակշռութիւն եւ օգտագործում է այդ հանգամանքը Ռուսաստանում հակահայկական խօսույթի ինտենսիւ տարածման համար:

Անկախ կլոպալ զարգացումների բնոյթից՝ Ռուսաստանը յառաջիկայ տարիներին շարունակելու է մնալ Հարաւային Կովկասում առաւել ազդեցիկ խաղացողներից մէկը եւ նրա հետ յարաբերութիւնների վատթարացումը միայն յաւելեալ խնդիրներ կը ստեղծի Հայաստանի համար:

Բենիամին Պօղոսեանը «ԱՊ-ՐԻ Արմենիա» վերլուծական կեդրոնի աւագ վերլուծաբան է:
«ՍԻՎԻՆԵԹ»

Իրանի Կարեւոր Յիշեցումը Հայաստանին. Պէտք Զէ Թիրընքում

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Նախորդ տարեվերջին Իրանի արտգործնախարար Ամիր Աբդոլահիանի հայաստանեան այցի ընթացքում արտայայտած մտքերը հայաստանեան հասարակական-քաղաքական, մետրա շրջանակներում թարմացրին հարցերը՝ Արեւմուտքի հետ Հայաստանի յարաբերութեան հանդէպ Իրանի դիրքորոշման առնչութեամբ: Իրանը պարբերաբար է յայտարարում, որ արտառեզիդնալ դերակատարների ներգրաւումը ռեզիդնալ խնդիրների լուծման հարցում, իր համար խնդրալարաց է: Հայաստանում սա բնականաբար ընկալւում է այն տրամաբանութեամբ, որ Իրանը դէմ է Արեւմուտքի հետ Հայաստանի յարաբերութեան խորացմանը: Արդեօ՞ք իրաւացի է այդ եզրահանգումը: Հազիւ թէ:

Նախ, որեւէ ուղղութեամբ յարաբերութիւնն զարգացնելը Հայաստանի ինքնիշխան իրաւունքն է: Միեւնոյն ժամանակ, որեւէ երկիր, այդ թւում Հայաստանը, զարգացնելով իր ինքնիշխան յարաբերութիւնը տարբեր ուղղութիւններով, անկասկած պէտք է հաշուի առնի իր անվտանգային անմիջական մի-

ջավայրում գոյութիւն ունեցող իրողութիւնները, առաւել եւս, եթէ դրանք իրենց կշռով, ծաւալով, ներուժով գերազանցում են Հայաստանի հնարաւորութիւնները բազմակի: Իրանն ըստ էութեան Հայաստանին յորդորում է հաշուի առնել իրողութիւնները: Դա բոլորովին չի նշանակում, որ Իրանը դէմ է Արեւմուտքի հետ Հայաստանի աշխատանքին:

Իրանը դէմ կը լինի, եթէ այդ աշխատանքը ստանայ բնոյթ, որը ռազմավարական հակադրութեան մէջ կը մտնի Իրանի շահերի հետ, որոնք այսօր Հայաստանի ռեզիդնալ անվտանգութեան միջավայրում առաւել համահունչն են Հայաստանի շահերի ու պատկերացումների հետ: Թեհրանը Երեւանին յորդորում է այն, ինչ ըստ էութեան եղել է եւ մշտապէս լինելու է Կովկասի անվտանգութեան միջավայրի հիմքում, այսպէս ասած՝ բնական-աշխարհագրական հիմքում, հետեւաբար լինելու է անվտանգութեան որեւէ ճարտարապետութեան անկիւնաքարային

հանգամանք: Արտառեզիդնալ որեւէ դերակատարի հետ աշխատանք արդիւնաւէտ կարող է լինել միայն այդ հանգամանքը հաշուի առնելու եւ համադրութեան տրամաբանութեամբ ուղեկցուելու պարագայում: Աւելին, այդ տրամաբանութիւնը կարող է ունենալ անգամ Իրանի պահանջարկը:

Դիմակայութիւններով սեղմուող աշխարհում դա անշուշտ աւելի ու աւելի բարդացող գործ է, սակայն հենց այդ գործն է, որ Հայաստանի համար չունի այլ տրամաբանութեամբ սխեմա առաջ է բերելու ռեզիդնալ խզումներ, որոնց թիրախում կը յայտնուի Հայաստանը: Հետեւաբար, Հայաստանը կամ կարողանում է արդիւնաւէտ զբաղուել այդ գործով, կամ արդէն կը յանձնուի բախտի քմահաճոյքին՝ թէ ինչ գործի շրջանակում կը զբաղուի Հայաստանով: Կարող է ի հարկէ դա ունենալ լաւելք, բայց բոլոր դէպքերում՝ մեզանից անկախ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակետները



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

44-օրեայ Պատերազմին Հետ Կապուած Դատարան Ուղարկուած Է 422 Անձի Վերաբերեալ Քրեական Գործ

Քննչական կոմիտէն 44-օրեայ պատերազմի հետ կապուած դատարան է ուղարկել 422 անձի վերաբերեալ քրեական գործ, 99-ը սպաներ են: Գործերի ճնշող մեծամասնութիւնը դատաքննութեան փուլում է: «Լուրեր»ուն ըսած է ՀՀ Քննչական կոմիտէի նախագահ Արգիշտի Քյարամեանը:



ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԻ ԳՆԱԽԱԳԱՏԻ ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄԵԱՆ

Հոկտեմբեր 7-8-ի գործողութեան հետ կապուած դէպքեր, զօրակոչի հետ կապուած խնդիրներ եւ եւս մէկ ուղղութիւն:

«Այս պահին կարող ենք արձանագրել, որ բացի մէկ ուղղութիւնից, մնացած բոլոր ուղղութիւններով հիմնական քննութիւնն աւարտուած է», ըսած է Քյարամեանը: Նշելով ճշգրիտ ուղղութիւնը:

Քկ նախագահը նշած է, որ այս պահի դրութեամբ առնուազն 99 սպաներ քրեական հետապնդման կենթարկուին: «Դատաքննութիւնը ցոյց կու տայ՝ մեղաւոր են այս մարդիկ, թէ ոչ: Բայց առնուազն նախաքննական մարմինի տեսանկիւնից շատ հարցերի պատասխաններ, իմ կարծիքով, մենք ունենք: Կան հանգամանքներ, որոնք նպաստել են պարտութեան վրայ հասնելուն, կան անձինք, որոնց գործողութիւնները կամ անգործութիւնն է նպաստել պարտութեանը», ըսած է Քյարամեանը: Վերջինս նշած է, որ արդիւնաւէտ քննութիւն ապահովելու տեսանկիւնէն վարոյթները բաժնած են ըստ ուղղութիւններու՝ 10-րդ հրաձգային բաժանմունքի, 18-րդ հրաձգային բաժանմունքի, 1-ին բանակային զօրաբանակի ուղղութիւններ, Շուշիի պաշտպանութեան,

ՀՀԽ-ին Պարգաբանումը Գարեգին Բ.-ի Ուղերձը Չհեռարձակելու Վերաբերեալ

«Դեկտեմբերի 31-ին Հանրապետական պալատի կողմէ կատարուած դրաճեցում էր հեռարձակել Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ի ուղերձը ամենադիտուող հատուածներին մէկում՝ պաշտօնական ուղերձների համար այս տարի առանձնացուած ժամին», այս մասին յայտնած են Հանրային Հեռարձակողի խորհուրդին:

«Կաթողիկոսի ելոյթը պէտք է յաջորդէր Սահմանադրութեամբ պետութեան գլուխ հանդիսացող ՀՀ նախագահի ելոյթին: Յաւօք, Դեկտեմբերի 31-ին Մայր Աթոռի անուանից Տէր Վահրամ քահանայ Մելիքեանը Հանրային Հեռարձակողի խորհրդին տեղեկացրել է, որ անհամաձայնութիւն են յայտնում ուղերձների համար նախատեսուած ժամի վերաբերեալ եւ պահանջում են չհեռարձակել եւ ընդհանրապէս չօգտագործել կաթողիկոսի ուղերձի տեսագրութիւնը, որի հեղինակային իրաւունքները պատկանում են Մայր Աթոռին: Քանի որ պահանջը միայն Հանրային հեռուստաընկերութեանն էր առնչուած, խորհրդին ենթակայ «Շոդակաթ» հեռուստաալիքը եւ Հանրային

ուստի ուղերձը հեռարձակել են, իսկ Հանրային հեռուստաընկերութեան եթերի վերաբերեալ բանաւոր դիմումը բաւարարուել է: Ամանորեայ ուղերձների հեռարձակման վերաբերեալ Հայաստանում չկայ օրէնսդրական կարգաւորում, եւ հէնց դա է պատճառը, որ իւրաքանչիւր հեռուստաընկերութիւն ինքն է որոշում, թէ երբ եւ ինչ հերթականութեամբ հեռարձակի ուղերձները, ինչն էլ տեղի է ունեցել: Հաշուի առնելով հանրային լայն արձագանգը՝ առաջարկուած ենք խնդիրը կարգաւորել օրէնսդրական դաշտում:

Ավստում ենք այս միջադէպի համար եւ յոյս ունենք, որ այն որեւէ կերպ չի անդրադառնայ Հանրայինի եւ Մայր Աթոռի համագործակցութեան վրայ», ըսուած է Հանրային Հեռարձակողի խորհուրդի տարածած յայտարարութեան մէջ:

Յիշեցնենք՝ Դեկտեմբեր 31-ին յայտնի դարձաւ, որ «Առաջին անգամ» Գարեգին Բ.-ի ուղերձը պիտի չհեռարձակէ երկրի ղեկավարի ուղերձէն առաջ, ինչն արդէն աւանդոյթ դարձած էր:

ԱՄՆ-ն Առաջին Անգամ Յայտնուած Է Հայաստանի Խոշորագոյն Առեւտրային Գործընկերներու Յանկին Վրայ

Հայաստանի ամենախոշոր առեւտրային գործընկերը 2023 թուականին շարունակած է մնալ Ռուսաստանի Դաշնութիւնը, թէեւ ընդհանուր առեւտրաշրջանառութեան մէջ մասնաբաժինը քիչ մը նուազած է, յայտնած է տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

«Մեր ամենախոշոր առեւտրային գործընկերը դեռեւս Ռուսաստանն է՝ չնայած իր մասնաբա-

ժինն ընդհանուր առեւտրաշրջանառութեան մէջ մի փոքր նուազել է: Յաջորդը Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Չինաստանը, Վրաստանն ու ԱՄՆ-ն են, որն առաջին անգամ է այս ցուցակում», ըսած է Քերոբեանը:

Նախարարը յայտնած է, որ կը շարունակեն աշխատանքը աւելի բազմազանացուած արտաքին առեւտրային շրջանառութիւն ունենալու ուղղութեամբ:


Հայաստանի Շուկայ Սուտք Պիտի Գործն Աշխարհի Խոշորագոյն Երեք Ընկերութիւններ Փոխնախարար

Աշխարհի խոշորագոյն ընկերութիւններէն երեքը, կը նախատեսուի, որ ներկայացուցչութիւն բանան Հայաստանի մէջ: Այս մասին յայտնեց տնտեսութեան փոխնախարար Անի Իսպիրեանը:

«2024 թուականին պէտք է իրականացնենք 21 միջոցառում, որի արդիւնքում ներդրումային եւ գործարար միջավայրը պէտք է զարգանան», ըսաւ Իսպիրեանը:

Փոխնախարարը ուշադրութիւն հրահրեց 3 մեծ կէտերու վրայ՝ յուսալով, որ շուտով կ'իրականացուին: «Մէկը աշխարհի խոշորագոյն 500 ընկերութիւններից 3-ի՝ Հայաստանում ներկայացուցչութեան բացումն է: Երկրորդը՝ աշխարհի 30 խոշորագոյն լաւագոյն պրենտներէ համապատասխան ցուցակներից նոյնպէս Հայաստան մուտք գործելն է», ըսաւ փոխնախարարը:

Յաջորդ ծրագիրը, որն Իսպիրեան առանձնացուց, տնտեսապէս բարդ ապրանքներու արտադրութեան խթանման ծրագիրն է: Կառավարութիւնը թիրախ դրած է մինչեւ 2026 թուական ՀՀ տնտեսա-



ՏՆՈՒՏԱՐԵԱՆ ՓՈՒՆՆԱՅԻՆ ԱՆԻ ԻՍՊԻՐԵԱՆ

կան բարդութեան ցուցիչը դարձնել առնուազն 01: Բոլոր այն արտադրողները, որոնք կ'արտադրեն 02 եւ աւելի բարձր բարդութիւն ունեցող ապրանքներ եւ կ'իրականացնեն առնուազն 1 միլիարտ դրամ ընդհանուր ներդրում, կրնան դիմել եւ ստանալ մինչեւ 35 տոկոս փոխհատուցում:

Երեւանի Սէջ Պիտի Կառուցուի Ակադեմական Քաղաք



Երեւանի մէջ կառուցուելիք Ակադեմական քաղաքի ցախագիծը

ՀՀ կառավարութեան որոշմամբ Երեւան քաղաքի եւ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններուն մէջ գտնուող որոշ տարածքներու նկատմամբ հանրութեան գերակայ շահ կը ճանչցուի:

Ըստ նախագիծի հիմնաւորման՝ Ակադեմական քաղաքի

ստեղծման նպատակով որպէս հիմնական տեղամաս ընտրուած է Երեւան քաղաքի 17-րդ թաղամասի տարածքը, որու սահմաններուն մէջ առկայ են ինչպէս պետութեան եւ համայնքի սեփականութիւն հանդիսացող հողամասեր, այնպէս ալ ֆիզիքական եւ իրաւաբանական անձերու պատկանող հողամասեր:

Հայաստանը ԵԱՏՄ Ընդհանուր Պիտճէին Տուած Է Աւելի Շատ, Քան Ստացած Է

Հայաստանը 2023 թուականին Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) ընդհանուր մաքսային պիտճէին տուած է աւելի շատ, քան ստացած է:

Այս մասին ըսաւ Պետական Եկամուտներու կոմիտէի նախագահ Ռուստամ Բաղասեանը կառավարութեան նիստէն յետոյ լրագրողներու հետ ձեպագրոյցին ընթացքին:

«Մենք կրկին շատ աւելի շատ մաքսատուրք ուղարկել ենք ընդհանուր կաթսայ, քան ստացել ենք: 73 միլիարտ դրամին մօտ գումար ստացել ենք, 140 միլիարտ դրամին մօտ գումար ուղարկել ենք», ըսաւ Բաղասեանը:

Բաղասեան նշեց, որ մինչեւ 2022 թուականը Հայաստանը աւելի շատ կը ստանար, քան կ'ուղարկէր ԵԱՏՄ ընդհանուր մաքսային պիտճէին:

www.massisweekly.com
Weekly News Updates

ԼՈՒՐԵՐ

Գրիգորեան Եւ Պոնօ Քննարկած Եւ Զայ-Ատրպէյճանական Զարցերը



Արմէն Գրիգորեան Երեւանի մէջ կը հանդիպի ԵԱԶԿ Միմսքի խումբի ամերիկացի համանախագահ Լուիս Պոնոյի հետ

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան Երեւանի մէջ ԱՄՆ Կովկասեան բանակցութիւններու հարցերով աւագ խորհրդական, ԵԱԶԿ Միմսքի խումբի ամերիկացի համանախագահ Լուիս Պոնոյի հետ քննարկած է Հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը:

Ըստ հայկական կողմին՝ Գրիգորեանն ու Պոնոն անդրադարձած են վերջին շրջանին տեղի ունեցած բանակցութիւններուն ու անոնց շրջանակներուն մէջ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու կատարման ընթացքին:

«Մէկ անգամ եւս վերահաստատել եմ հայկական կողմի յանձնառութիւնը՝ տարածաշրջանում հաստատելու երկարատեւ եւ համապարփակ խաղաղութիւն», հանդիպումէն յետոյ ֆէյսպուքեան իր էջով գրած է Արմէն Գրիգորեանը:

Անցեալ շաբաթավերջին ճեպագրողի ընթացքին ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ

Մեթիու Միլլըր յայտնած էր, մասնաւորապէս, որ Ռուսաստանը չի խանգարեր Միացեալ Նահանգները՝ ջանքեր գործադրելու հայ-ատրպէյճանական կարգաւորման ուղղութեամբ, որոնք, իր կարծիքով, «անհրաժեշտ են Ատրպէյճանին եւ Հայաստանին»: «Եւ մենք պիտի շարունակենք հետամուտ ըլլալ անոնց», յաւելած էր ան:

Հարցումին՝ ե՞րբ պաշտօնական Ուաշինկթընը կ'ակնկալէ հիւրընկալել նախարարները, Պետական Քարտուղարութեան խօսնակը պատասխանած էր. «Հետեւեցէք, մենք յայտարարութեամբ հանդէս կու գանք, երբ հանդիպում նշանակուի»:

Շաբաթ օրը Սթամպուլի մէջ կայացած հանդիպման ժամանակ ԱՄՆ պետական քարտուղար Էնթրի Պիլինքըն եւ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Հաքան Ֆիտանը քննարկած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւնները, հարդորած են թրքական լրատուամիջոցները:

ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը Արձագանգած Է Երուսաղէմի Զայկական Թաղամասի Սէջ Տիրող Իրավիճակին

Միացեալ Նահանգները չի փափաքիր, որ Իսրայէլի կառավարութիւնը որեւէ քայլ ձեռնարկէ, որ կրնայ յանգեցնել լարուածութեան աճի: ԱՄՆ Պետական Քարտուղարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մեթիու Միլլըր այսպէս արձագանգած է Երուսաղէմի Հայկական թաղամասին մէջ տիրող իրավիճակի մասին հարցին:

Միլլըրէն խնդրած էին մեկնաբանել Երուսաղէմի Հայկական թաղամասի աքթիւիսթներու մտահոգութիւններուն վերաբերեալ հարցը առ այն, որ Իսրայէլի կառավարութիւնը կ'օգտագործէ կազմի հատուածին մէջ հակամարտութիւնը՝ քրիստոնեայ հայերը «Կովերու Պարտէզ»ի տարածքէն դուրս մղելու համար:

Ինչպէս նշած է ամերիկացի դիւանագէտը, այս հարցին յստակ պատասխան չկայ:

«Մենք բազմիցս յայտարարած ենք, որ չենք փափաքիր, որ Իսրայէլի կառավարութիւնը որեւէ քայլ ձեռնարկէ, որ կրնայ յանգեցնել լարուածութեան աճի», ըսած է Միլլըր ճեպագրողի ընթացքին:

Անոր խօսքով՝ Կովկասեան տարածաշրջանին արդէն ոչ թէ հակամարտութիւն, այլ բարեկամութիւն եւ համագործակցութիւն է անհրաժեշտ. «Կովկասի մէջ անվտանգութեան եւ անդորրի հաստատումը կ'անցնի Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ հա-

մարտութիւնը կ'օգտագործէ կազմի հատուածին մէջ հակամարտութիւնը՝ քրիստոնեայ հայերը «Կովերու Պարտէզ»ի տարածքէն դուրս մղելու համար:

Թուրքիոյ Պաշտպանութեան Նախարարը Գոհունակութիւն Յայտնած Է

Թուրքիոյ պաշտպանութեան նախարարը իր հարցազրոյցներէն մէկուն մէջ յայտնած է, որ անոնք Ատրպէյճանի հետ միասնական են վիճաբանութեան մէջ:

«Մեր ռազմավարական դաշնակցութեան ամրապնդման եւ համագործակցութեան խորացման ուղղութեամբ համատեղ ջանքերը յաջողութեամբ կը շարունակուին: Պաշտպանական արդիւնաբերութեան եւ ռազմական համագործակցութեան գլխաւորութեամբ՝

Չի Կրնար Ըլլալ Որեւէ Միջանցքի Զարց, Կը Բացառուի Նման Բան. Գրիգորեանը՝ Խաղաղութեան Պայմանագրի Մասին

«Յոռուարի 4-ին հայկական կողմը պատասխանել է խաղաղութեան պայմանագրի ատրպէյճանական առաջարկներին»:

Այս մասին Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին ընթացքին ըսած է Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

«Պատասխաններն ուղարկել ենք ու այժմ ակնկալում ենք Ատրպէյճանի պատասխանը: Համաձայնութիւն կայ, որ Յոռուարի վերջին սահմանագատման յանձնաժողովները եւս հանդիպեն: Յոռուարի վերջին, որ այդ հանդիպումը տեղի կ'ունենայ», նշած է ԱՄ քարտուղարը:

Հարցումին, թէ բանակցային գործընթացին յարաշարժութիւնը ինչպիսի՞ն է, ան պատասխանած է՝ կան եւ դրական կողմեր, եւ բացասական. «Որոշ հարցեր կան, որոնք յառաջընթաց չեն գրանցել: Այն բոլոր հարցերը, որոնց շուրջ լուծում չենք գտել, ակնկալում ենք, որ բանակցութիւնների միջոցով հնարաւոր կը լինի հնարաւորինս շուտ դրանք վերջնականացնել, եւ կնքել այդ խաղաղութեան պայմանագիրը»:

Յարաշարժութիւնը դրական ենք գնահատում, բայց նաեւ կան հարցեր, որտեղ որոշակի յառաջընթացներ էինք գրանցել, բայց խաղաղութեան պայմանագրում մենք այդ յառաջընթացը չենք տեսել: Այսինքն՝ հարցեր կան, որոնց շուրջ բանաւոր բանակցութեան ժամանակ դրական աշխուժութիւն ենք տեսել, բայց խաղաղութեան պայմանագրի բնագրում որոշակի յետընթացներ ենք տեսել: Ի հարկէ, նաեւ կան կէտեր, որտեղ յառաջընթաց ենք գրանցել, բայց դրանք չեն մանրամասնի՝ բանակցային սկզբունքները:

րի էթիկայից ելնելով»:

Վերջինս նաեւ նկատած է՝ խաղաղութեան պայմանագիրը անոր մասին է, որ կարենան համակեցութիւն ստեղծել տարածաշրջանին մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ. «Եւ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ատրպէյճանը տարածքային որեւէ նկրտումներ չունենան միմեանց նկատմամբ: Մա կարեւոր սկզբունք է, որպէսզի խաղաղութեան պայմանագիր ստորագրուի, եւ ՀՀ-ն շարժուի է այս ուղղութեամբ»:

Արմէն Գրիգորեանը վերահաստատած է՝ չի կրնար ըլլալ որեւէ միջանցքի հարց, կը բացառուի նման բան. «Ատրպէյճանցիները մեզ բանաւոր խօսքում վստահեցնում են, որ ընդունում են ՀՀ-ի չորս սկզբունքները, այսինքն՝ ինքնիշխանութիւն, իրաւագործութիւն, փոխադարձութիւն եւ հաւասարութիւն: Մենք բանակցութիւնների ընթացքում կ'արձանագրենք այս չորս սկզբունքները, ինչի արձանագրումը նշանակում է բացառում որեւէ միջանցքային տրամաբանութեան»:

Ռուսաստանի հետ գէնքի շուրջ պայմանագրային պարտաւորութիւնները չեն կատարուած: Այս մասին ըսած է Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

«Մենք նոր համաձայնագրեր չունենք ՌԴ-ի հետ, գոյութիւն ունեցող պայմանագրերի շուրջ թարմացումներ են կատարուում», նշած է Գրիգորեան:

Այն յաւելած է, որ 2021 թուականին ի վեր կնքուած են գէնքի քանի մը պայմանագրեր, որոնք չեն կատարուած, այժմ անոնց մէկ մասը կը վերանայուի, բանակցութիւններ կ'ընթանան այդ ուղղութեամբ:

Պետական Եկամուտներու Կոմիտէն 2023 Թուականը Ամփոփած Է Աւելի Քան Զինգ Սիլիառ Տոլար Զարկային Եկամուտներով

Պետական Եկամուտներու Կոմիտէն 2023 թուականը ամփոփած է 2 թրիլիոն 221,9 միլիառ դրամ (5 միլիոն ԱՄՆ տոլար) հարկային եկամուտներով՝ գերազանցելով նախորդ տարուայ ցուցանիշը 295,9 միլիառ դրամով կամ 15,4%-ով: Տարեսկիզբին հաստատուած՝ 2 թրիլիոն 203,7 միլիառ ծրագրային ցուցանիշը գերազանցելով 18,2 միլիառ դրամով:

Հարկ վճարողներուն եւ ֆիրմաքանչի անձերուն վերադարձուած է շուրջ 362,9 միլիառ դրամ՝ նախորդ տարուան ցուցանիշը գերազանցելով 100,1 միլիառ դրամով կամ շուրջ 38,1%-ով: Հաշուարկային փաստաթուղթերու (այդ շարքին՝ ՀԴՄ կտրօններով) տուեալներով իրականացուած է 648,7 միլիոն գործարք՝ 12,2 թրիլիոն դրամ արժէքով՝ գերազանցելով նախորդ տարուան ցուցանիշը՝ 45 միլիոն գործարքով եւ 2,1 թրիլիոն

դրամով: Արձանագրուած է աշխատատեղերու եւ միջին աշխատավարձի մրցանակային աճ. եկամուտ ստացող աշխատատեղերու թուաքանակը Նոյեմբերին կազմած է շուրջ 738 հազար, նախորդ տարուան ցուցանիշը գերազանցելով 5,2%-ով, միջին աշխատավարձը կազմած է 293 հազար դրամ, աճը՝ 10,6%:

Կոմիտէն 2023 թուականը ավարտած է նաեւ նախանշուած ծրագրերու իրագործմամբ: Տարին յատկանշուած է հարկային ոլորտին մէջ իրականացուած արդիւնաւէտ վարչարարութեամբ, ընթացակարգերու պարզեցմամբ եւ թուայնացմամբ, հետեւողական բարեփոխումներով, օրէնսդրական նախաձեռնութիւններով: Միջազգային համագործակցութեան ուղղութեամբ ՊԵԿ-ը եւս կարեւոր ձեռքբերումներ արձանագրած է:

մապարփակ եւ մնայուն խաղաղութեան պայմանագրի միջով: Կ'աջակցինք անոր ուղղուած անկեղծ ջանքերուն, կը փափաքինք, որ պահ առաջ դրականօրէն հանգուցալուծուին», ըսած է Թուրք

նախարարը: Վերջինս գոհունակութիւն յայտնած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ վստահութեան մեծացման ուղղուած քայլերու առնչութեամբ:

Իրանի ԱԳ Նախարարը Կը Բացառէ Զայաստանի Զիւլէական Կայանին Պատճառով Արաքս Գետի Աղտոտումը



Իրանի արտաքին գործերու նախարար Զոսէյն Ամիր Ապտոլլահեան

Իրանի արտաքին գործերու նախարար Զոսէյն Ամիր Ապտոլլահեան հերքած է այն պնդումները, թէ Հայաստանի մէջ Մեծամորի աթոմակայանը կրնայ ռատիօաքթիլ նիւթերով աղտոտել սահմանային Արաքս գետը: Անոր խօսքերը մէջբերած է «Tasnim» գործակալութիւնը:

«Իրանի հիւլէական ուժանիւթի կազմակերպութեան տեխնիկական եւ ճանաչողական հաշուետուութեան հիման վրայ՝ Հայաստանի մէջ Մեծամորի աթոմակայանին կողմէ առաջացած որեւէ աղտոտածութեան առկայութիւնը կը բացառուի», ըսած է նախարարը՝ պատասխանելով պատգամաւոր Վալի Իսմայիլի՝ Հայաստանի Մեծամորի աթոմակայանի թափօններով Արաքս գետի աղտոտման հնարաւորութեան մասին հարցումին:

Յիշեցնենք՝ սա առաջին անգամը չէ, որ իրանեան կողմը կը հերքէ Մեծամորի հիւլէական ելեկտրակայանի թափօններով Արաքսի ռատիօաքթիլ աղտոտման մասին տեղեկութիւնները՝ պատասխանելով, մասնաւորապէս, մամուլի հրապարակումներուն, թէ ռատիօաքթիլ աղտոտածութեան պատճառով, ամենայն հաւանականութեամբ՝ Հայաստանէն, Իրանի հիւլէաքսը աճած է քաղցկեղային հիւլէաքսի տեղեկութիւններով:

Իրանի մասնագէտները նշած են, որ Հայաստանի Մեծամորի հիւլէական ելեկտրակայանի եւ Արաքս գետի միջեւ մեծ հեռաւորութիւն կայ, եւ որեւէ հաւանականութիւն չկայ, որ այս ելեկտրակայանին կեղտաջրերը կրնան յայտնուիլ գետին մէջ եւ զայն աղտոտել ռատիօաքթիլ նիւթերով:

Լեմքինի Զինարկը Դատապարտած է Արեւելեան Երուսաղէմի Զայկական Թաղամասին Վրայ Յարձակումը



Յեղասպանութեան կանխարգելման Լեմքինի հիմնարկը խստորէն կը դատապարտէ իսրայէլա-աւստրալացի գործարար Տենի Ռուպենշթէյնի հետ կապուած զինուած խմբաւորումներու վերջին դաժան յարձակումը Արեւելեան Երուսաղէմի հայկական թաղամասին վրայ:

«Մենք կը կրկնենք մեր նախորդ յայտարարութեան կոչը՝ պաշտպանելու հայկական թաղամասին մշակութային ժառանգութիւնը եւ յարգելու անոր բնակիչներուն կամքը, որոնք կը շարունակեն դիմադրել իրենց հողերուն բռնի իւրացմանը», ըստած է հիմնարկի յայտարարութեան մէջ:

Լեմքինի հիմնարկը ընդգ-

ծած է, որ նման իրադարձութիւնները կը նպաստեն գանգուածային վաշտագութիւններուն եւ ցեղասպանութեան նպաստող միջավայրի ստեղծման: Կը նշուի, որ նման նախազգուշացումները կարեւոր են հայերու դէմ հետագայ մագլցումը կանխելու համար:

«Մենք լիովին կ'աջակցինք սաղիմահայութեան դիմադրութեան եւ իշխանութիւններուն կոչ կ'ընենք բոլոր անհրաժեշտ միջոցներով ապահովելու հայկական թաղամասին եւ Արեւելեան Երուսաղէմի մնացած մասին անվտանգութիւնն ու տարած քայլին ամբողջականութիւնը», նշուած է յայտարարութեան մէջ:

Յոմի Պապը Զրատապ Զամարած Է Արցախցիներուն Վերադարձի Զարցը

Հոմի Ֆրանչիսկոս Պապը Յունուար 8-ին աւանդութի համաձայն Սուրբ Աթոռին մէջ ընդունած է հաւատարմագրուած դեսպաններն ու դիւանագէտները: «Vatican News»-ը հրապարակած է, որ Հոմի պապի աւանդական ճառի առանցքին այս անգամ խաղաղութիւնը եղած է:

Հոմի պապը անդրադարձած է հակամարտող պետութիւններուն՝ անխմաստ սպանդ անուանելով պատերազմը:

Նորին Սրբութիւնը մտահոգութիւն յայտնած է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լարուած իրավիճակին համար: Ան եւս մէկ անգամ խաղաղութեան կոչ հնչեցուցած է՝ հրատապ համարելով նաեւ արցախցիներու օրինա-



Կան ու անվտանգ տուն վերադարձի հարցը:

Հայաստանէն Արամանդի Արտահանման Ծաւալը Աճած Է 30 Տոկոսով



Հայաստանէն նախորդ տարի արտահանուած է 30 տոկոսով աւելի շատ աղամանդ, քան 2022 թուականին: Այս մասին ըսաւ տնտեսութեան փոխնախարար Նարեկ Տէրեանը՝ ամփոփելով 2023 թուականի ցուցանիշերը:

2021-ին ստեղծուած է «Հայալմաստ» ընկերութիւնը, որ հումքի ամրապնդող է՝ աղամանդ արտադրողներու համար:

«Ընդհանուր «Հայալմաստը» 58 միլիոն տոլարի հումք է ներգրա-

ւել եւ տրամադրել արադրողներին: Իսկ ընդհանուր արտահանման ծաւալները մօտ 30 տոկոսով աճել են՝ 2022 թուականի համեմատ», ըսաւ Նարեկ Տէրեանը:

Ըստ անոր՝ աղամանդի արտադրական ծաւալները կ'աճին, նախորդ տարի 2 նոր գործարան բացուած է:

Ոսկերչութիւնը, ըստ փոխնախարարին, եւս կը զարգանայ: Կը նախատեսուի նաեւ ոսկիի վերարտահանման պետական տուրք սահմանել:

Փարաճանովի Արձանը Պիտի Տեղադրուի Կինոյի Տան Յարակից Զրապարակը



Փարաճանովի 100-ամեակին նուիրուած արձանը

Բեմադրիչ, բեմադրի Սերկէյ Փարաճանովի 100-ամեակին, որ կը նշուի Յունուար 9-ին, մեկնարկեց անոր նուիրուած միջոցաւորումներու շարքը: Հանրութեան ներ-

կայացուցեալ Փարաճանովի արձանը, որ յառաջիկային պիտի տեղադրուի Կինոյի տան յարակից հրապարակին վրայ, որ պիտի կրէ «Նուան գոյնը» անուանումը:

ՀՀ Արտաքին Քաղաքականության Լայտակար

Շարունակուած էջ 1-էն

այնպէս ալ այն երկիրներու հետ, որոնց հետ համագործակցութեան զարգացումն ունի շոշափելի ներուժ թէ՛ տնտեսական, թէ՛ այլ ոլորտներու մէջ: Այս ծիրին մէջ, նշուած են այն այցերն ու շփումները, որոնք նոր լիցք եւ բովանդակութիւն հաղորդած են համապատասխան երկիրներու հետ օրակարգի, երկկողմ եւ բազմակողմ հարթակներու վրայ գործընկերութեան զարգացման: Ընդգծուած է, որ տարբեր ուղղութիւններով յարաբերութիւնները բարձրացուած են կամ միտուած են որակապէս նոր, այդ շարքին՝ ռազմավարական երկխօսութեան մակարդակի, եւ այդ առումով տարին յազնցած եղած է իրենց ձեւաչափով միջոցառումներով եւ աշխուժութեամբ: Արձանագրուած է, որ տարուայ ընթացքին կայացած է 34 բարձրաստիճան այց Հայաստանի Հանրապետութիւն, իսկ ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէ իրականացուած է 68 այց, որմէ 40-ը՝ արտաքին գործերու նախարարին կողմէ:

ՀՀ վարչապետին ներկայացուած են նաեւ բազմակողմ հարթակներու վրայ միջազգային խաղաղութեան ու անվտանգութեան, զարգացման համագործակցութեան, մարդու իրաւունքներու պաշտպանութեան, բազմակողմ մշակութային համագործակցութեան ընդլայնման, ինչպէս նաեւ տարբեր կառուցներու մէջ ՀՀ թեկնածութիւններու յառաջդրման աշխատանքներն ու արդիւնքները: Ներկայացուած են նաեւ առանցքային խնդիրներու շուրջ ՀՀ դիրքորոշումները, ի թիւս այլ նախաձեռնութիւններու, ՀՀ կառավարութեան կողմէ մշակուած «Սաղաղութեան խաչմերուկ» նախագիծի հանրահռչակման ուղղութեամբ իրականացուած աշխատանքները, այդ շարքին՝ միջազգային մամուլում շուրջ 2500 հրապարակումներու միջոցով:

Ներկայացուած են նաեւ 2024 թ. ծրագրուող միջազգային միջոցառումները եւ այդ ուղղութեամբ նախանշուող ֆինանսական ծախսերը:

Անդրադարձ կատարուած է ՀՀ-ի մէջ, ինչպէս նաեւ արտերկրի մէջ ՀՀ նոր դիւանագիտական եւ հիւպատոսական հիմնարկներու բացման առնչուող հարցերու:

Ներկայացուած են նաեւ ԱԳՆ կեդրոնական համակարգի եւ արտերկրի մէջ ՀՀ դիւանագիտական ծառայութեան մարմիններու աշ-

խատանքային, այդ շարքին՝ շէնքային պայմաններու բարելաման ուղղութեամբ իրականացուած ծաւալուն, թիրախային աշխատանքները: Ընդգծուած է, որ թուային օրակարգի շրջանակին մէջ շարունակուած է հիւպատոսական ծառայութիւններու թուայնացումը, ինչի շնորհիւ ներդրուած է առցանց վճարումներու, հերթագրման եւ տեսակապի միջոցով համապատասխան փաստաթուղթերու տրամադրման հնարաւորութիւնը:

Ընդգծելով դիւանագիտական ծառայութեան կարողութիւնները ուժեղացնելու կարեւորութիւնը՝ ներկայացուած են նաեւ արտաքին քաղաքական գերատեսչութիւնը դիւանագիտական դէմքերով համալրելու, ինչպէս նաեւ ՀՀ դիւանագիտական դպրոցին մէջ օտարերկրեայ դիւանագէտներու վերապատրաստման ծրագրերը: Անդրադարձ կատարուած է ԱԳՆ համակարգին մէջ իրականացուող եւ շարունակական բաւարարողութեան, դիւանագիտական ծառայութեան գրաւորութեան աւելացման նպատակով հնարաւոր քայլերուն: Այս ծիրին մէջ վարչապետ ֆաշինեան ընդգծած է, որ դիւանագիտական ծառայութիւնը իր բնոյթով առանձնացատու է եւ կարեւորած է միջնաժամկէտ եւ երկարաժամկէտ հեռանկարով ծառայութեան ներուժը հարստացնելու, այդ շարքին՝ երիտասարդ ու յատուկ մասնագիտական կարողութիւններ ունեցող դէմքերով զայն լրացուցիչ համալրելու գործընթացը:

Հաշուետուութեան ներկայացումէն չեսոյ ծաւալած է մտքերու փոխանակութիւն: Նախանշուած են քանի մը ուղղութիւններով ԱԳՆ հետագայ ծրագրերն ու ընելիքները:

Վարչապետ ֆաշինեան կարեւորած է դիւանագիտական ծառայութեան շարունակական զարգացումը՝ ներկայիս համաշխարհային միտումներուն համահունչ: «Հայաստանի արտաքին քաղաքականութեան բարձրագոյն նպատակը Հայաստանի ինքնիշխանութիւնը, անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնն ապահովելը եւ երաշխաւորելն է», ըսած է վարչապետը: Նիկոլ ֆաշինեան ընդգծած է նաեւ արտա-

«Փութինը Արտօնեց Ատրպէյճանին Եւ Թուրքիոյ՝ Ետ Վերցնել Լեռնային Ղարաբաղը», Կը գրէ «Էքոնոմիսթ»



«Էքոնոմիսթ» թերթը առանձնացուցած է 2024-ին կայանալիք կարեւորագոյն իրադարձութիւններն ու հնարաւոր վտանգները, որ այս կամ այն կերպ պիտի փոխեն կեանքը մոլորակին վրայ: Հարաւային կովկասի մասին բրիտանական պարբերականը գրած է. «2020-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փութինը արտօնեց Ատրպէյճանին եւ Թուրքիոյ՝ ետ վերցնել Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքները: Միաժամանակ, սեփական՝ խաղաղապահ զօրքը տեղակայեց Լեռնային Ղարաբաղի մէջ, իբրեւ թէ հայերը պաշտպանելու, իսկ իրականութեան մէջ՝ սեփական ազդեցութիւնը պահպանելու համար: Բաց, երբ եկաւ Ուքրանիոյ դէմ պատերազմելու ժամանակը, Փութինը նախընտրեց յարաբերութիւնները Թուրքիոյ ու Ատրպէյճանի հետ, քան՝ աղքատ, ժողովրդավարական Հայաստանի, եւ թոյլ տուաւ Ատրպէյճանին մաքրել Լեռնային Ղարաբաղը հայերէ, որոնք յոյս դրած էին Մոսկուայի պաշտպանութեան վրայ»:

«Արցախահայերուն դաւաճանութիւնը, անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնն ապահովելը եւ երաշխաւորելն է», ըսած է վարչապետը: Նիկոլ ֆաշինեան ընդգծած է նաեւ արտա-

նելէ բացի Ռուսաստանը յոյս ունի նաեւ շահարկել անոնց գաղթը՝ Հայաստանի մէջ վարչակարգի փոփոխութիւն հրահրելու համար: Փութինը նաեւ յոյս ունի պահպանել այնտեղ ազդեցութիւնը՝ վերահսկելով Թուրքիան Ատրպէյճանի հետ կապող միջանցքը, որ կրնայ անցնիլ Հայաստանով»:

Հեղինակաւոր պարբերականը միաժամանակ կը նկատէ, որ այժմ Ատրպէյճանն ու Թուրքիան իրենց ձեռքը վերցուցած են բոլոր խաղաքարտերը եւ չեն պատրաստուիր անհարկի գիշումներ ընելու Մոսկուային: Միւս կողմէ, Թուրքիան ու Ատրպէյճանը նաեւ չեն ուզեր Արեւմուտքի կողմը անցնիլ: «Անգարան ու Պաքուն կ'ուզեն իրենց սեփական ուժային յենակէտը ստեղծել կովկասի մէջ», կը գրէ «Էքոնոմիսթ»-ը՝ յաւելելով. «Ուքրանիոյ դէմ Ռուսաստանի պատերազմի հետեւանքներէն մէկը միջին քաղաքին պետութիւններու, օրինակ՝ Թուրքիոյ վերելքն է, միւսը՝ Քրեմլինի ազդեցութեան թուլացումը յետխորհրդային աշխարհին մէջ»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՂԻ ՇԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



ՅՈՒՆԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
 Նուիրուած
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆԻ
 Մշակութային, Կրթական, Լրագրական Ու Հասարակական Գործունէութեան
 Կազմակերպութեամբ՝
 Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
 Մասնակցութեամբ՝
 Նոր Սերունդ Մշակութային Միութեան
 Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան
 Մասիս Շարաքաթերթի
 Տեղի Կունենայ՝
Կիրակի Յունուար 28, 2024
 Երեկոյեան Ժամը 5-ին
 ՀԿԲՄ-ի Կեդրոնէն Ներս
 1060 North Allen Avenue • Pasadena • CA 91104
 RSVP 626-797-7680 or email: Info@sdhpusa.org
 Հրատարակուած

Massis Weekly

Volume 44, No. 1

Saturday, January 13, 2024

լով ունեցաւ իր աննկարագրելի ու անբացատրելի ազդեցութիւնը մանուկներու հոգեվիճակին փոխադրելով զանոնք իրենց երեւալայական գունաւոր, բարի, խաղաղ ու հրաշալի աշխարհը, անոնք մեծ ուրախութեամբ վայելելոյն անոր հաճելի ներկայ յ ու թ ի լ ն ը իրենց գեղեցիկ ձայնով ու հայկական եռանդով երգեցին արտասանեցին ապա ողջունեցին կաղանդ պապուկին յայտնելով իրենց ուրախութիւնը եւ երախտագիտութիւնը հեռաւոր Հայրենիքէն ժամանելուն ու այցելելուն Ամերիկահայ հայասէր ու ազգասէր մանուկներուն:

Աւարտին վարչական ընկերները շնորհաւորեցին բոլոր ներկաները մաղթելով անոնց Բարի Ամանոր, յոյս, փափաքներու իրականացում քաջաւորջութիւն ու երջանկութեամբ պահուած տարի մը:



ներթափանցէր ներկաներու եւ կազմակերպիչներու հոգիներուն որոնք բծախնդրօրէն կիրազործէին իրենց պատրաստած ծրագիրներ որ կ'ընդգրկէր՝ Օրուայ խորհուրդը ներկայացնող Բացման խօսք, ընկերուհի Ռիթա Շահինեանի կարդացողութեամբ, գծագրութիւն, նկարչութիւն, երգ, պար, հաճելի խաղեր առաւել՝ մանկական աշխարհը գեղեցկացնող եւ հարստացնող օրուայ տօնին հետ առնչուող ձեռագիր աշխատանքներ:

Կաղանդ պապուկի այցելութիւնը բեռնաւորուած մանուկներու յատուկ գեղեցիկ նուէրներ

Ներկաները բաժնուեցան ուրախ տրամադրութեամբ, շնորհակալութիւն յայտնելով նոր սերունդի եռանդուն ու աշխոյժ վարչական կազմին յատկապէս՝ Ալին Սարգիսեանին, Ռիթա եւ Սեւան Շահինեաններուն Անի բինէճեանին եւ Անժէլլա Տէօշողլանեանի մաղթելով ուժ ու կորով նաեւ՝ նոր բացայայտումներով ու ձեռքբերումներով առաւել յաջողութեան լոյսերով զարդարուած տարի մը իրենց, միութեանական, արուեստի, մշակոյթի եւ հայապահպանման սրբազան գործին ու առաքելութեան մէջ:

ԱՆԻ ՄԱՐՍԻԼԵԱՆ

Տօնական Տրամադրութիւն Թրքահայ Համայնքէն Ներս

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներուն առիթով տօնական բարձր տրամադրութիւնը ակնբերեւ դարձած էր թրքահայ համայնքէն ներս: Յատկապէս Ս. Ծննդեան առթիւ Պոլսոյ եւ արուարձանի բոլոր եկեղեցիները լեցուն էին հաւատացեալներով: Այս առթիւ թուրքիոյ հայոց պատրիարք՝ Ամեն. Սահակ արք. պատարագեց Գումգաբուի աթոռանիստ Մայր տաճարին մէջ, որուն աւարտին տեղի ունեցած աւանդական ընդունելութեան ընթացքին, գաղութի ղեկավարները փոխանակեցին իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները:

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն նուիրուած հիւանալի համերգ մը տեղի ունեցաւ Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ամբողջ համերգը նկարահանուեցաւ եւ ուղղակի եթերով հեռատուեցաւ «Լոյս» T.V.-ի կողմէ: Երգչախումբին մաս կը կազմէին թենորներ՝ Գրիգոր Թերզեանն ու Յովսէփ Գուլումճեանը, պարիթոն երգիչներ՝ Սէրճան Կազէօղլուն ու Արթիւր Պաղտասարեանը: Խումբի գեղարուեստական ղեկավարն էր էտիլին Զարիպեանը, որ երգեհոնով ընկերակցեցաւ երգիչներուն: Բոլոր ելոյթներն ալ կատարուեցան վերնատունէն, իսկ ժողովուրդը համերգին կը հետեւէր մեծ պաստառէ մը, որ գետեղուած էր խորանը ծածկող վարագոյրին առջեւ:

Երկնային Տիրոջ հետ հաղորդուելու հրաշալի պահեր էին, հրամցուած իւրապատուկ երգեցողութեամբ ու գեղարուեստական ճաշակով: Թէ իմբային եւ թէ մենակատարութեամբ մեկնաբանուած երգերը՝ ակնաշ շոյցեցին ու մեր սրտերուն խօսեցան անտեսանելի կամուրջ մը հաստատելով երժշտութեան ճամբով:

Անվերապահօրէն կրնանք հաստատել որ Ս. Աստուածածին եկեղեցւոյ խորախորհուրդ մթնոլորտին մէջ, Սարգիս եւ Կարապետ Պալեաններու կողմէ կառուցուած հրաշակերտ կամարներուն տակ, զգացականութիւնը երգերու միջոցով, պարբերաբար հասաւ իր կատարելութեան: Այդպիսի երգերէն էին «Ավէ Մարիա», «Խորհուրդ Մեծ»ը, «Նախնարեցէք»ը, որ ձօնուած է երանաշնորհ Մեսրոպ Պատրիարքի յիշատակին, դաշնաւորումով էտիլին Կալիպեանի, «Տէր Ողորմեա»ն որ դարձեալ էտիլին Կալիպեանի եռաձայն դաշնաւորումով, պատրաստուած է Շահան Արք. Սվաճեանի վախճանման առթիւ:

Հոգեշ. Տ. Յարութիւն Վրդ. Տամատեանի խօսքերու հիման վրայ

էտիլին Կալիպեանի յօրինած «էջմիածին Սուրբ Տաճար» երգը առաջին անգամ մեկնաբանուեցաւ որպէս «գարդ»՝ բարձրորակ յայտագրին:

Վայելքի մէջ էինք եւ չանդրադարձանք թէ ինչպէս յայտագիրը հասաւ իր աւարտին: «Հայր Մեր»ի տերունական աղօթքը վերջին կտորն էր: Մենք տպաւորուած էինք: Քառեակի անդամներու եւ իրենց ղեկավարը՝ իսկապէս յաջողած էին տաղաւարի տօնին աւետիսը իմաստալից դարձնել հրաշալի կատարումներով եւ միասնութեան պատկերով:

Աւարտին՝ հանդիսականներու գնահատանքն արտայայտուեցաւ երկար ծափերու ընդմէջէն: Արուեստագէտները վար իջան վերնատունէն, ստանալով յուշանուէրներ ու ծաղկեփունջեր: Հուսկ խօսքն արտասանելով, Նորին Ամենապատուութիւն Սահակ Պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն ու յայտագրին մասնակից արուեստագէտներուն: Ընդգծեց որ երգեցողութիւնները մատուցուեցան իրենց հարազատութեան մէջ, առանց բարձրախօսի, ցոյց տալով որ ձայնը՝ հիւանալի կերպով կ'արձագանգէր եկեղեցւոյ մէջ: Ան դիտել տուաւ որ արեւմտեան ախարհին մէջ՝ Ս. Ծննդեան տօնի օրերուն, տօնին նուիրուած երգեցողութիւններն ամէնուրեք կը հնչեն: Մեր պարագան տարբեր է: Բայց ուրախալի որ այսպիսի համերգներով հաղորդ կը դառնանք ծննդեան աւետիսին: Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց Պէշիկթաշի եկեղեցւոյ ընտանիքը, հոգեւոր հովիւ՝ Տ. Սարգիս Ա. քահանան, որուն անունը նոյնացած է այս պատմական եկեղեցւոյ հետ, Թաղային Խորհուրդը՝ ատենապետ Կարօ Վարժապետեանի գլխաւորութեամբ, որոնք բոլորը կը ջանան արթուն պահել հայերէ նօսրացած թաղի հոգեւոր կեդրոնի շունչը: Մաղթեց նաեւ որ այս համերգները աւանդական դառնան ու բացի հայերէ, օտարներ եւս հրաւիրուին թէ հայկական հոգեւոր երգեցողութեան ունկնդիր դառնալու եւ թէ Պալեաններու կողմէ կառուցուած եկեղեցին տեսնելու համար:

Բոլորը խանդավառ էին: Խմբանկարուելէ ետք, հաւաքուեցան «Պալեան» սրահին մէջ, ուր թաղականութիւնը ճիւղ ընդունեցին մարքած էր եւ առիթ ստեղծած, որ մասնակիցներ զրոյցներու եւ երկխօսութիւններու միջոցով, անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնէին օրուան «հերոս»ներուն:

«ՄԱՐՄԱՐԱ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:-----
 Email: -----

Պարադարձի Յոբելեան Պարոյր Սեւակ - 100-Ամեակ

Զանախչի, Սովետաշէն գիւղ, ներկայիս՝ Զանգակատուն, 24 Յունուար 1924 - Երեւան, 17 Յունիս 1971

ՅԱԿՈՒ ՏԻԼԵԱՅԵԱՆ


«Ինչպէ՞ս կարելի է Պարոյր Սեւակի գերեզմանի առաջ չհաւատալ հոգու անմահութեանը... Պարոյր Սեւակն այնպիսիներից եղաւ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահներից մէկն է աշխարհում...»:

ՎԱԶԳԷՆ Ա. ԱՍԵՆԱՅՆ ԴԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հայ գրաքննադատական միտքի հսկան՝ Յակոբ Օշական, Վահան Թէքէեան բանաստեղծին նուիրուած ընդարձակ իր գրավերլուծական բաժինին մէջ շեշտուածօրէն հաստատած է, կատարելով իր եզրայայտումը, թէ «Վահան Թէքէեան մէկն է մեր նոր քնարերգութեան ամէնէն խոր բանաստեղծներէն, եթէ ոչ ամենախորը: Վասնզի առաջին անգամ ինք մտցուց խորութեան զգայարանը, dimension-ը անոր մէջ»:

Արեւելահայ արդի գրականութեան ներկայացուցիչներ՝ յատկապէս Թումանեանով, Իսահակեանով ճամբայ ելած քնարերգութիւնը եթէ պանդուխտի երգերով, հայրենի ածունները, Հայրենիքն ու անոր մէջ մի քարին, երկնաբարձ Մասիսին ու գլխի վրայ ջուրընտել, հեքիաթներուն, հպստին հպարտահիւս ժառանգութիւնը պահպանելու կենարար ու կենսական տաղարաններ յարգարեց մեր տառապակոծ ժողովուրդի հոգիին մէջ, առաւել՝ Տէրեանի ու Չարենցի գրականութեամբ նոր աղօսներ բացած արեւելահայ քերթողութիւնը ամբարգրեց հայուն յեղափոխաշունչ խռովքը, պայքարուն կամքն ու անխախտ հաւատքը, ո՛չ թէ այլեւս լոկ օրօրելու հայրենաբաղձութիւնը հայու հոգիին մէջ, այլ աշտանակելով, կերտելով՝ ճանապարհը Հող-Հայրենիքին՝ ռազմաճակատներու վրայ, հարկաւ իրենց ժամանակներուն պարտադրած քաղաքական հողմերու մէջ, «Արնոտ Հայրենիք»ի փրկագործութեան ի սէր եւ ի խնդիր, արարելով «Մթնշաղի Անուրջներ»ն ու «Ոսկէ Շղթան», «Երկիր Նայիրի»ն եւ «Հոկտեմբերեան Երգեր»ը, «Դանթէական Առասպել»ն ու «Գիրք Ճանապարհի»ն, եւ այլ մատենաներ...:

Նայիրի Զարեանի, Գուրգէն Մահարիի, Վահրամ Ալազանի, Խաչիկ Դաշտենցի, Համօ Սահեանի, Յովհաննէս Շիրազի, Մարօ Մարգարեանի, Սիրլա Կապուտիկեանի, Գէորգ Էմինի, Հրաչեայ Յովհաննիսեանի, Վահագն Դաւթեանի եւ ապա Պարոյր Սեւակի քերթողութիւնն ու անոնց մոտքը խորհրդահայ գրականութեան անդաստանէն ներս, ինչպէս նաեւ ինտերնացիոնալիստական ժամանակներու անոյշին ու լեղին հետ ընտելանալու անոնց կենսափորձը խորհրդահայ գրականութեան մէջ նոր հոգեխառնութեան, մտածողութեան մթնոլորտ ստեղծողներէն 30-ական ու 40-ական թուականներու թիւովարու մէջ: Յիշեալ փաղանգին մէջ, արդարեւ, Պարոյր Սեւակ իր բնատուր տաղանդով ու իր գրչի ընկերներէն ակնառու կերպով գատորոշուող իր խառնուածքով, իր գիւղին ու բնաշխարհին (Զանախչի, ապա Սովետաշէն, այժմ՝



Պարոյր Սեւակ

Զանգակատուն) անապական ամբողջումը ըմպած, իր «Անմահները Հրամայում են» (1948) տպաւորիչ խորագրով երախայրիքին հրապարակումով իսկ յեղափոխաշունչ մարտկաշունչ նոր ոգի ու ջիղ բերաւ խորհրդահայ քերթողութեան, որուն դաշտին դեռ կը տիրէր Չարենցի սպանութեամբ հայ հասարակութեան կոտորածը, խռովքը, ընդվզումը այդ ժամանակուան կարգերուն դէմ, այդ կարգերուն սայլին լծուած որոշ մտաւորականներու ալ վարքին դէմ: Ըսինք նոր ոգի ու ջիղ ոչ միայն խորհրդահայ քերթողութեան, այլեւ հայ հասարակութեան լայն խաւերուն մէջ, ընդդէմ աշխարհ մը անիրաւութիւններու, ընկերային-քաղաքական կորուստներու, զարտուղութիւններու, երբ դեռ Հայաստանի երկնակամարէն չէին հեռանալ մարտի թխպահած ամպերը ու երկրի ռեժիմին հեղձուցիչ սարսուռը, որ սկսեց ինչ աւելի քան տասնամեակ մ'առաջ, մուրճ ու մանգաղով հնձելով Աղասի Խանճեանը, ապա Եղիշէ Չարենցը, Ակսէլ Բակունցն ու Վահան Թոթովենցը, եւ դեռ շատ շատերը, անվերջանալի կարաւանը խորհրդահայ նահատակեալ մտաւորականներուն...:

1937-ի Նոյեմբերին երբ բանտի մէջ կը հաստատուէր սպանութիւնը հանճարեղ պոէտ Եղիշէ Չարենցի, 13-ամեայ Պարոյր Ղազարեանը՝ ապագայ հանճարեղ բանաստեղծ Պարոյր Սեւակը դեռ ուսանող էր միջնակարգ վարժարանի մէջ: Բայց Չարենց՝ գալիքը տեսանող մարգարէ-պոէտը, կարծէք Պարոյր Սեւակին ուղղած ըլլար իր հետեւեալ բանաստեղծութիւնը.-

... Եւ նա կը գայ, պոէտն այն մեծ,
Մեր երագած պոէտը նոր,
Եւ ներկայիս մարդուն կ'երգէ
Երգով իր վեհ, ու բորբ ու խոր:-
Պղնձածոյլ իր քնարով
Շունչը կ'երգէ մեր մեծ դարի,
Կ'այրէ սրտերը սուրբ հրով -
Ու չի դաւ իր քնարին...
Ու Պարոյր Սեւակ՝ հայոց մեծերու անմահներու շարքին, «Անմահները Հրամայում են» իր բանաստեղծութեամբ, տաս տարի ետք (1946-ին) հետեւեալ տողերով պատասխանեց իր երէց նահատակ գրչեղբոր՝ Եղիշէ Չարենցի վերի տողերուն, ու մնաց յամառ՝ պայքարի մարտին մէջ, շարունակելու Չարենցի անմեռ կտակը.-

... Ասես ասում եմ ինձ եղբայրօրէն գուարթ.-
-Եղիւր նոյնքան յամառ, որքան մարտուն,

մարտուն,
Մի՛ վարանիր, ընկեր, մի՛ երկմտիր բնաւ,
Այլ կերպ չէինք յաղթի եւ չեմ յաղթում:

Զգա՛ շունչը դարի երակներով, արեամբ,
Մեր արեան պէս եղիր վառ ու անմեռ,
Յիշի՛ր, որ միասին մենք փրկել ենք համայն
Աշխարհի բախտը եւ կը փրկենք դեռ:

Արդարեւ, յետջարենցեան խորհրդահայ բանաստեղծութիւնը իր ամէնէն մաքրափայլ մարտնչումի պղնձածոյլ շեփորանուագը, դարու ըմբոստագին շունչը, անմահներու դարերու երգը գտաւ Պարոյր Սեւակի ողջ քերթողութեան մէջ, սկսեալ «Անմահները Հրամայում են» (1948) անդրանիկ ժողովածուէն, ապա «Անհաշտ Մտերմութիւն» (1953), «Սիրոյ Ճանապարհ» (1957), Սեւակի գլուխգործոցը համարուող «Անլուելի Զանգակատուն» (1959) երկերու շարունակութեամբ, ապա «Մարդը Ափի Մէջ» (1963), «Սայեաթ-Նովա» (1969), «Եղիցի Լոյս» (1969) եւ «Զեր Ծանօթները» (1971) քերթողագիրքերը, որոնց մէջ պիտի ներառել «Եռաձայն Պատարագ», «Հաւատարմութիւնը Սրտի Արատ Զէ», «Եւ Այր Մի՛ Մաշտոց Անուն», «Նահանջ Երգով», «Allo Մայակովսկի», «Լուսին», «Քարտաշը», «Ուշացած Իմ Սէր», «Երգ Երգոց», «Ֆրանչեսկա Դա Ռիմինի» (ըստ Տանթէի) պոէմները:




այր ու որդի՝ Անահիտ Սողոմոնեան եւ Պարոյր Սեւակ սիրտ-սիրտի

«Անհաշտ Մտերմութիւն» ժողովածուին մէջ հայրենի գիւղն ու շինականը կը դառնան նոր մուսաներու ապրող վկաները: Այստեղ ճանաչողական արժէք կը դառնան կոլլեկտիւ երգերը, որոնք տակաւ իրենց հերոսներով բարձրանալով հանդէս պիտի գան «Սիրոյ Ճանապարհ»ին մէջ՝ սեւակեան քնարին բազմալար ու բազմահունչ, լայնահունչ եւ բազմահար արօրին տակ վերածուելու բնութեան ու սիրոյ մոթիվներու մարդերգակ սիմֆոնիայի...:

... Դու այդպէս էլ ընկար-կիսով արդէն մարտիկ,
Կիսով չափ դեռ դարբին կոլլեկտային,
Միտքդ՝ թողած մուրճիդ, ձեռքդ՝ ավտոմատիդ
Եւ ականջդ՝ մօտիկ յաղթանակի ձայնին:

Իսկ եւ դեռ ապրեցի: Թողած թուղք ու մատիտ,
Քեծած պատերազմի աստծուն պողպատ քամքով,
Մտքով նորից քեզ հետ, միշտ



Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Պարոյր Սեւակ

քո կողքին մօտիկ,
Առաջ արշաւեցի մեր նահանջի ճամբով:

Մենք միասին անցանք այն ճանապարհն ամբողջ,
Ուր մենք ապրել էինք ցաւ ու վտանգ:

Շուրջը այնժամ գարուն, վառ կանաչ էր, բողբոջ,
Արեւն էր յաղթութեան, արեան ցոլքն էր քո թանկ...
(«ՓԱՌՔԻ ՊԱՏՈՒԱՆԴԱՆ» - «ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ» ժողովածուէն)

65 տարի առաջ՝ 1959-ին արարուած «Անլուելի Զանգակատուն»ը՝ նուիրուած կոմիտաս վարդապետի ծննդեան 90-ամեակին: Սեւակի քնարերգութեան գագաթնակէտն ու գրական բերքին հանրագումարն է այս թերեւս. բանաստեղծին «երկանաքար»էն հրաբորբ ժայթքուն շուրջ 7000 տողնոց այս պոէմը, յիրաւի, Մեծ Եղեռնի մահազոյժ զանգակներուն դէմ մեր ժողովուրդի ծարաւահրճ սիրտերուն համար տասնամեակներ դարձաւ, դարեր ալ պիտի մնայ գրական աւետարան, անսպառ շունչով ընթերցող հոգիի բալասան ու սնունդ, բոլոր ժամանակներուն բեմերու վրայ ասունքով մատուցող ներշնչման աւագան.-

... Դո՛ւ - Վարդապէ՛տ:
Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
Դո՛ւ՛ մեր երգի Մետրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն եւ Հայոց երգի:

Դու մեր հաստատ Մասիս սարձ՝
Վատահելի թիկունքն ես մեր,

Արտը մեզմից՝ դու ես մաճկալ,
Յարդը մեզմից՝ ցորենը դու...

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՛ մեր երգի Մշտահնչուն նուագարան.
Ընդունիր դո՛ւ՛ մեր ցաքուցիր Մասունքների հաւաքարար.
Դո՛ւ՛ խաղերի մեր քերական,
Դո՛ւ՛ հոգեւոր մեր շարական.
Դո՛ւ՛ սրբազան մի աւագան,
Որ մեր հոգին այստահանեց.
Դո՛ւ՛ բիբլիական մի գաւազան,
Որ ուր դիպաւ՝ աղբիւր հանեց.
Դո՛ւ՛ մեր կարօտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտաթրոն,
Անլուելի գանգակատուն...
Արդ, Յակոբ Օշականի եզրակացութեան հետեւողութեամբ, սակայն խորհրդահայ գրական դաշտին վրայ՝ յատկապէս Պարոյր Սեւակի քերթողութեան կապակ-

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան Սեմին

ԴՊԿՏ. ԱԲԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սուրբծննդեան շնորհաբեր օրերու սեմին, ազնիւ բարեկամ մը կաթողիկէ կայքէջի մը մէջ հրատարակուած ժամանակակից սրբնկար մը յանձնեց ուշադրութեանս՝ Աստուածամայրը իր Յիսուս մանուկով: Սրբանկարը խորհրդանշական յղացք մը ունի եւ բոլորովին կը տարբերի մեզի ծանօթ Սուրբծննդեան ընթացիկ պատկերներէն: Անոնք սովորաբար մտուրի մը խաղաղ եւ զուարթուն հրեշտակներու օրհնութեամբ օծուն միջավայր մը կ'ուրուագեն, որոնք մարդկային կեանքին մէջ, յանձին մարդեղացած Աստուածորդուն՝ մանուկ Յիսուսի, սուրբ ծնունդին փրկարար խորհուրդը կ'աւետեն օրհնեցողով՝ «Փառք Աստուծոյ՝ բարձունքներուն մէջ, եւ խաղաղութիւն երկրի վրայ ու հաշտութիւն մարդոց միջեւ» (Ղուկ. Բ. 14):

Խոր յուզումով կը դիտեմ ժամանակակից արուեստի այս յղացքը, որ վրձինի բնորոշ գիծերով ամբողջութեամբ կ'արտայայտէ ոչ միայն ծնունդի եւ նոր սկիզբի մը ուրախութիւնը, այլեւ մեր աշխարհի խոր վէրքերէն յառաջացած անսահման տխրութիւնը: Նկարին առաջամասը պատկերուած է Աստուածամայրը, որ վիրակապերու մէջ՝ կարեւիք ու ցաւատանջ, մայրական իր խանդակաթ սիրով գորովագութ գրկած է նոյնքան վիրաւոր մանուկ Յիսուսը, մինչդեռ խորապատկերին վրայ կը ծաւալին պատերազմական կործանարար եւ մահասփիւռ տեսարաններ՝ արտացոլելով մեր ժամանակի տխուր իրականութիւնը:

Բոլորս կը գիտակցինք, որ արդի աշխարհի մեր տառապի բազմաթիւ ցաւերով եւ ստիպուած կ'ըլլայ դիմագրաւելու խոշորագոյն մարտահրաւէրներ, որոնց յառաջացման պատճառները, սակայն, միանշանակ մարդկային են ու կը կրեն ոչ տարբեր հեղինակներու, այլ բացառապէս չարագործ մութ ուժերու ստորագրութիւնը: Արդարեւ, չարին գոհակութիւնը կը դրսեւորուի ամենադաժան արարքներով, որոնք մահացու հարուած կը հասցնեն անհամար անմեղ հոգիներու՝ խաղաղ քաղաքացիներու, տարեցներու, երեխաներու, նաեւ պատերազմներու մէջ ներգրաւուած բիւրաւոր գինուորներու կեանքներուն: Հին ու նոր աշխարհի ամենատխուր փաստերէն մէկն ալ այն է, որ աշխարհաքարոզ կրօններ եւ կը չարաշահուին գերպետութիւններու կողմէ ու ամենայն քարասրտութեամբ կ'օգտագործուին ի նպաստ իրենց հետապնդած քաղաքական նպատակներուն: Այսպէս, կրօնքը, մշակույթն ու քաղաքակրթութիւնը կը սահմանափակուին հասարակական կեանքին մէջ իրականացնելու իրենց հիմնական գործառնությունները՝ պաշտպանել կարենալու համար տկարը գործէն եւ սանձելու մարդը իր բնածին կիրքերէն՝ մարդուն դէմ գալլ գառնալու բնագոյն:

Այնուհետեւ մարդ արարածը դժուար թէ պէտք ունենայ նոյնիսկ ամենաչար սատանայի մը օժանդակութեան, երբ ան իր իսկ ձեռքերով կը կառուցէ իր անձին սեփական դժուարքը՝ անհամեմատելի չափերու հասցնելով պետութիւններու միջեւ սպառնալից մը եւ գերարդիական գէնքերու ար-

դիւնաբերութեան վրայ օրէցօր սպառնելով արդէն աստղաբաշխական թիւերն ալ գերազանցող իր նիւթական միջոցները: Մինչդեռ այս բոլորը կարելի էր տրամադրել մարդկութեան բարիքին, փոխանակ առաւել եւս խորացնելու մարդկային կեանքի ողբոց եւ հառաչանաց, սեւ ու սուգի հովիտը:

Ըստ ՄԱԿի Գաղթականներու գործակալութեան հաղորդած հաւաստի տուեալներուն՝ այսօր աշխարհի վրայ աւելի քան 108,4 միլիոն մարդիկ բնական աղէտներու, պատերազմներու եւ տնտեսական տագնապներու հետեւանքով գաղթական դարձած են՝ կամայ թէ ակամայ հեռանալով իրենց ծննդավայրերէն ու հայրենիքէն, գէթ ապրելու նուազագոյն կարելիութիւն մը գտնելու համար աւելի ապահով թուացող այլ երկիրներու մէջ:

Այս մուսլլ համայնապատկերին վրայ Աստուածամօր եւ մանուկ Յիսուսի սոյն սրբապատկերը կոչ կ'ուղղէ մեզի ոչ միայն տօնելու Սուրբծննդեան աւետիսը, այլեւ ընդունելու այն ցաւալի իրականութիւնը, որ կ'ապրինք վիրաւոր աշխարհի մը մէջ, եւ թէ անոր բոլորովին ինչպիսի՜ հրատապ անհրաժեշտութիւն մը կը ներկայացնէ համայն մարդկութեան եւ մեր երկիր մտլորակին համար: Վիրակապերու մէջ՝ կարեւիք ու ցաւատանջ Աստուածածինը, որպէս իր երեխային ցաւը կ'իտղ մայր՝ իր ամենասուրբ եւ կուսական կերպարով կը մարմնաւորէ մարդկութեան հանդէպ այն գորակցութիւնը, որ ուղղակի անփոխարինելի է առանձնապէս տառապանքով ու անարդարութեամբ լեցուն մերօրեայ դառնաղէտ ժամանակաշրջանին համար:

Ներկայ աշխարհի քաղաքական հակամարտութիւններու եւ կրօնական լարուածութեան պայմաններուն մէջ, Սուրբծննդեան տօնը թող մեզմէ իւրաքանչիւրին յիշեցնէ, որ իսկական խաղաղութիւնը հիմնուած է մարդկութեան հանդէպ փոխադարձ սիրոյ, յարգանքի եւ արդարութեան վրայ: Կարելի չէ ձեռք բերել մնայուն խաղաղութիւն մը, եթէ ան ամբողջութեամբ չէ արդարութեան կրանիտեայ սկզբունքին վրայ: Նաեւ հասարակական կեանքին մէջ քաղաքական անդորրութիւնը միաժամանակ կը նախադրէ կրօններու միջեւ հանդուրժողութեան կենսագործում եւ կառուցողական երկխօսութիւններու վտանգը կանխարգիլելու մշտատեւ պատրաստակամութիւն: Հետեւաբար, Սուրբծննդեան զուարթուն հրեշտակներուն ազգերու, ժողովուրդներու եւ պետական կառուցներու միջեւ, ի վերջոյ՝ մարդոց մէջ «հաճութեան» աւետիսը կը կենսագործուի կառուցելով կամուրջներ, նպաստելով փոխադարձ հասկացողութեան եւ ստեղծելով միասնական աշխատանքի մթնոլորտ՝ բուժել կարենալու համար մեր տառապահիւժ աշխարհի կոտորած գլխերը:

Յիւրաւի՛, այսօրուան հարկու եւ պատերազմներով խռովեալ աշխարհին մէջ, երբ միլիոնաւոր մարդոց հետ մենք եւս ենթարկուած խոր անձկութեան, ուժգին կարօտով մը բարեխաղն որքան պէտք ունինք երկխոսութեան մը իսկական կատարումին: Ուստի անձկագին կը

«Արի Արարատ Հուպ Տուր...»



ԴՊԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Այս տղաքը պատանեկան տարիներուն իմ հերոսներէն էին: Վերջապէս՝ իւրաքանչիւր պատանիներ իրենց կուտան ներշնչում՝ կեանքի մէջ մեծնալու ժամանակահատուածին մէջ: Արարատ 73 ի տղաքը՝ այս իմաստով իմ հերոսներէն էին: Անոնք եթէ մէկ կողմէ հերոս էին իրենց ֆուլթայլի խաղաոճի մեծ տաղանդի եւ կարողականութիւններուն համար՝ բայց նաեւ աւելին: Անոնք դարձած էին ինծի համար հերոսներ՝ որոնք սրակեցին իմ պատանեկան տարիներուն Ազգայինի եւ անոր հասկացողութեան գիտակցութիւնը՝ բայց նոյնքան նաեւ այդ բոլորին նկատմամբ Հպարտութիւնը: Հպարտութիւնը հայուն, հայրենիքին եւ անոր մշակույթին: Եթէ մէկ կողմէ կը քաջալերուէի երբ Պէյրութ կուգային՝ բայց նաեւ առիթը ունեցայ իրենց մրցումներուն ներկայ ըլլայ Երեւանի Հրազդան մարզադաշտի մէջ: Եւ հոն՝ ես ալ հայրենի ժողովուրդին հետ կը միանայի քաջալերական բացականչութիւններուն: «Արի Արարատ Հուպ տուր»: Եւ այս տղաքը տարիներու վրայ երկարած «հուպ» տուին: Եթէ հուպերուն կը յաջողէր կոլերը՝ բայց իւրաքանչիւր կոլին հետ անոնք իմ կեանքի մէջ կը դնէին եւ կ'աւելցնէին մէկ նոր հունտ մը՝ ազգային ինքնութեան եւ անոր հպարտութեանը մէջէն:

Այս հերոս՝ «լեգենդար» տղոցմէ մի քանիները արդէն մեկնեցան իրենց երկրային կեանքէն: Բայց լսելի է տակաւին իմ մեր քաջալերական բացականչութիւնները: «Արի Արարատ Հուպ տուր...»: Եթէ Արարատ 73 ի այս հերոս տղաքը, այսօր, Հրազդանի եւ այլ մարզադաշտերու մէջ չենք բայց անոնք կը յիշեցնեն մեզի թէ «հուպ» տալէ չեն դադարած...: Բայց մանաւանդ կը յիշեցնեն թէ մենք բոլորս որպէս հայ ժողովուրդ պէտք է «հուպ» տանք: Հուպ տանք մեր անհատական, ընտանեկան եւ ազգային ու

հայրենի կեանքերուն մէջ նոր «կոլեր» նշանակելու համար: Հուպ տանք նոր ոստումի, նոր կամքի եւ նոր Յոյսի՝ իմա՛նոր եւ նորոգուած «հուպերու»: Հուպեր որ պիտի նորոգեն եւ վերանորոգեն, շինեն ու վերաշինեն մեզ: Նոր Հայր...:

Քրիստոսի ծնունդը կ'իմաստաւորուի ճիշդ այս իրականութեանը մէջէն: Յիսուս աշխարհ եկաւ «Նոր կեանք» ը պարզեցնելու համար մարդկութեանը եւ նաեւ հայուն: Ան աշխարհ եկաւ եւ իր ստեղծած նոր կեանքով՝ նոր «հուպ» տուաւ եւ կը շարունակէ տալ մարդկութեանը: Հուպ մը որ կուտայ արժէք: Արժէքը կեանքի, հայրենիքի եւ մարդուն: Արժէքը հայուն եւ անոր ապրելու զրաւակա-

նին: 2023 տարին մեզի՝ հայուն համար եղաւ շատ ԴժՈՒԱՐ: Տարի մը անցուցինք ուր տեսանք գրկանք, մահ եւ կորսնցուցինք հայրենիքէն մաս մը ու արժէք: Վիրաւոր վիճակի մէջ ենք՝ հոգիով, արտով, արժանապատուութեամբ եւ մեր հպարտութիւնը ճգմուած: Պիտի մնանք այս «դժուար» վիճակին մէջ՝ թէ՞ պիտի ուզենք նոր «հուպ» տալ մեր կեանքերուն:

Արարատ 73 ի հերոս տղաքը մեզի սորվեցուցին թէ արժէ հաւատալ հուպերուն եւ անոր ստեղծած արժէքներուն: Արժէ որ շարունակենք սորվիլ եւ հաւատալ թէ կրնանք նոր «հուպ» տալ մեր ազգային եւ հաւաքական կեանքերուն:

«Արի Արարատ Հուպ տուր» Բայց անպայմանօրէն...

«Արի հայ ժողովուրդ հուպ տուր»

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Ձեզի եւ մեր բոլորին մեծ Աւետիս: Եւ Անտիսը՝ Քրիստոսի նոր կեանքի շնորհած «հուպ» է: Այն հուպը՝ որ մեզ բոլորս դուրս կրնայ հանել մեր դժուար օրերուն մէջէն:


Արի բոլորս՝ հայեր՝ Հայաստան, Արցախ եւ սփիւռք՝ հուպ տանք:

Եւ նոր ԿԵԱՆՔԸ շինենք: Հայուն Նոր կեանքը...:

դիմենք վիրակապերու մէջ գտնուող կարեւիք ու ցաւատանջ Աստուածամօր բարեխօսութեան, որ ինչպէս խանդակաթ եւ գործվագութիւն իր մանուկ Յիսուսին, նոյնպէս ողորմած հայի նաեւ իր երկրաւոր ուստրերուն եւ դուստրերուն, որպէսզի Սուրբծննդեան լոյսը ճեղքէ մեր սրտին մէջ բոց դրած խաւարը ու մեզ առաջնորդէ եւ աւելի խորը ըմբռնելու եւ գնահատելու կեանքի թանկարժէք նուէրը՝ կեանքը եւ աւելի՛

կեանքը: Ձերմօրէն կը մաղթեմ ձեզի եւ ձեր սիրելիներուն ամենայն բարիք եւ Աստուծոյ առատ օրհնութիւնը Ամանորի եւ Սուրբծննդեան բերկրալի տօներուն առթիւ: Թող այս նոր տարին արդիւնաւորուի յարգալից համագործակցութեամբ, միասնական համոզութեամբ, յուսադրող հեռանկարներով՝ ի խնդիր ազգայնաշունչ եւ հայրենաշէն ծրագրերու իրականացման:

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ԱՐԱ ԱՐԹՒՆ ԳՕՓՈՒՇԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 14 Յունուար, 2024ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ, 2215 East Colorado Blvd. Pasadena, CA 91107:

MEMORIAL SERVICE ARA ARTIN KOPOOSHIAN

A memorial service will be held following church service to mark the 40th day of ARA ARTIN KOPOOSHIAN's passing on Sunday, January 14, 2024, at St. Gregory Armenian Apostolic Church, located at 2215 East Colorado Blvd. Pasadena, CA 91107.

Requested by: Mrs. Rina Jerian Mr. and Mrs. Krikor and Madlen Satamian

Պարոյր Սեւակ - 100-Ամեակ

Շարունակուած էջ 13-էն

ցութեամբ կ'ըսեմ աներկբայօրէն... թումանեանով կ'անհունանանք որպէս իմաստուն ու շինարար ժողովուրդ, Տէրեանով կ'անըջանանք՝ դէպի Երկիր Նաիրի, Չարենցով կը կերտենք դարերը վաղուան՝ դէպի Գալիքը պայծառ, Շիրազով կը մասիսուինք բռնցքացած, Պարոյր Սեւակով՝ կը զգաստանանք՝ խորութեամբը մարդկային խղճմտանքին, անոր փիլիսոփայափառ բանականութեամբը: Այսպէս, յետպատերազմեան խորհրդահայ քերթողութեան մէջ, Թէքէեանին նման, ո'չ հարկաւ Թէքէեանի կշիռով ու լեզուամտածողութեամբ, Պարոյր Սեւակ բերաւ խորութեան զգայարանքը՝ Յաւին առէջները քակելով մինչեւ վերջ ու թաքթաբուր չըսուելիքը ըսելով՝ խիզախութեամբ, խօշական յանդգնութեամբ՝ հեզնելով կոշտութեան սխրանքն ու բոլոր նորմերը, «թքած» իսկ ամէն սուտուփուտ շքանշան, շատ անգամ քանդելով կամուրջները «անհասանելի» Սուտին ու փղոսկրեայ աշտարակներու վրայ անանող Կեղծիքին, Դաւին, եսամոլութեան... Մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում, Մարդ կայ՝ ելել է շալակն աշխարհի... Նա, որ ելել է շալակն աշխարհի, Աշխարհում երբեք թաց տեղ չի քնում, Գիտի թէ ո'ւն հետ եւ ո'ւր է գնում, Ուն մեռելին է անարցունք լալիս, Ուն խօսքի վրայ ստից ծիծաղում, Ուն հետ դիմչ ցստած մարդի է խաղում, Հարկ եղած դէպքում եւ տանուլ տալիս...

Վերից է մայուն ցածրում կանգնածին, 2ի մայուն երբեք ներքեւ ընկածին... *** Հեշտ գրպարտում է՝ երբ տեղն է գալիս, Նոյն հեշտութեամբ էլ իր մեղքն է լալիս... Ամէն ինչից շատ, ամէն ինչից վեր, Հարազատ մօրից ու որդուց աւել, Աշխարհում նա իր աշխարհն է սիրում... Սո'ւտ է: Նա այնտեղ իր շահն է սիրում: *** Սո'ւտ է: Նա դարի աւարն է սիրում: *** Սո'ւտ է: Նա միայն իր փորն է սիրում: *** Ամէն ինչից շատ, ամէն ինչից վեր Սիրում է կեանքում նա իր... աթոռը: Աթոռն է սիրում Ու նրան տիրում: Յանկացած գնով ելնում է նա վեր, Փորձում է թռչել նա առանց թելեր, Անվերջ սողալով առաջ է գնում, Գնում է այսպէս եւ... տարեցտարի ելնում է այսպէս... շալակն աշխարհի: Մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում, Մարդ կայ՝ ելել է շալակն աշխարհի... Ու ի տես սա բոլոր անարդա-

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայան) Ֆերնանեսանի մահուան քսանչորրորդ (24) տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար, 2024-ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝ Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան, Վիգէն Գուլումճեան:

ըութիւններուն, բանաստեղծը իրաւացի է սրտին խորերէն վեր բերելու իր կեանքին մէջ գղջացած մէկ պահը կամ պահերը, մարդկային ըլլալու իր սխալները, անանձնական զոհաբերումներու դիմաց խաբուած ըլլալու իր անդարմանելի Յաւը, եւ վեց երկտողանի տաղաչափեալ բանաստեղծութեամբ, առանց բառերը ծամծմելու՝ պոռթկալու: -

Ես օգնեցի բոլորին, ես ինձ միայն չօգնեցի, Կորով տուի ամէնքին, միայն ինքս յոգնեցի:

Խորհուրդներով իմ խելօք խելք հաւաքած գնացին Քանի՛-քանի՛սը կեանքում - ես էլի գիտ մնացի:

Ով հանդիպեց՝ ստացաւ մի թաս գինի ինձանից, Լոկ ես գինի չըմպեցի իմ սեփական հնձանից:

Ի՞նչ եմ եղել ողջ կեանքում՝ հարսանքաւոր ու քաւոր, Սինչ ամէնքից աւելի ինձ էր օճախ հարկաւոր:

Վստահեցին ոմանք ինձ - հոգիս դարձաւ գաղտնարան, Վստահեցի շատերին - գաղտնիքս առան ու տարան:

Ու գղջում եմ ես մի պահ. Սէր ու բարիք եմ ցրել, Սինչդեռ պէտք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել...

Բարիքը վաճառելով...: Բայց բարիքը վաճառելով չէ՞ որ բարիքը կը դադրի ա՛լ բարիք համարուելէ: Սեւակեան մտքի ու հոգիի ներդաշնակութեամբ խիզախուած այս թռիչքը իրօք կը հանդիսանայ իր գղջման հրաբուխը՝ արձակուած իր ամէնէն իսկ մտերիմներուն երեսին, որոնք կերան, խմեցին Սեւակէն, Սեւակի խորհուրդներով բարձրացան ու օջախներ կառուցեցին ու... «մարդ» դարձան...: Հատերուն հաստատումով՝ թէ Պարոյր Սեւակ յաճախ կոշտ է եղած իր վարքով ու վարմունքով, բայց քնարերգակ բանաստեղծին հոգին անժուժելի բարութեամբ է դարպասած իր թանկագին մայրը, որուն հոգիին մէջ Սեւակ մնացած է այն

մանուկը, որ երբեք չէ ուզած դուրս գալ այնտեղէն, դողալով անոր անմահութեան, դողալով մօր սրտի մէն մի բաբախումին, իր թանկագին մօր՝ Անահիտ Սողոմոնեանի, որուն Սեւակը Ազի կը կոչէր եւ յաճախ կ'ըսէր իր շուրջիներուն. «Մօրս հացի տախտակն է իմ սեղանը, եւ գրտնակն է իմ քանոնը, խմորով եմ թուղթ կպցնում...»: Ու մօր հանդէպ կաթոգին այս սէրը, սիրագեղ փիլիսոփայութիւնը, բանաստեղծը արարած է հետեւեալ տողերով: -

Ես ծնուել եմ նրա համար, Որ մօր սրտում կարօտ դառնամ եւ սպասուող որդու նման Հեռուներից վերադառնամ...

Եւ Սեւակի վաղաժամ, առեղծուածային մահը, այդպէս ալ, երկար ժամանակ, կարոտախտով մաշեցուց սիրտն ու հոգին իր Անահիտ մօր, ինչպէս եւ հօր, հարազատներուն, Հայաստանի եւ Սփիւռքի համայն հայութեան...:

Իրաւացի էր մեծ բանաստեղծը, որ ըսած է. «Եթէ չլինէր Յովհաննէս թումանեանը՝ չէր լինի Աւետիք Իսահակեանը. եթէ չլինէր Աւետիք Իսահակեանը՝ չէր լինի Վահան Տէրեանը. եթէ չլինէր Վահան Տէրեանը՝ չէր լինի Եղիշէ Չարենցը»: Եղիշէ Չարենցի ջիղէն ու երակներէն սնած Պարոյր Սեւակը չէր լինի Պարոյր Սեւակ՝ եթէ չլինէր Եղիշէ Չարենցը: Ու Սեւակ՝ ինչպէս յիշեցինք վերելը, տուա՛ւ թէկուզ դռնըն այդ փաստը իր «Անմահները Հրամայում են»՝ բանաստեղծութեամբ, անսալով անմահ Չարենցի պատգամին, հրամայագիրին (Ասես ասում են ինձ...):

Բայց, հարցումներուն գերագոյնը.- Ո՞ր է հայրենի՝ իսկ հողին վրայ յետադարձեցեան ու յետսեւակեան, յետսահանական ու յետշիրազեան, յետկապուտիկեանական բանաստեղծութիւնը, հին կրակով նոր կրակ հաղորդելու ճիգն ու ճգնանքը Գ. Հանրապետութեան՝ ներկայ անկախութեան տարիներուն...:

«...Ու դեռ... գլխի չէնք գալիս...»՝ այսով ու հառաչանքով կը կրկնէր Պարոյր Սեւակ...:

Մեծագոյն Յաւը այն է, որ անդարձ անցած են Չարենցեան, Սեւակեան ժամանակները եւ մեր երկիրը չունի նոր արշալոյսներ բռնկող Չարենցներ ու Պարոյր Սեւակներ, որոնք կը թուի թէ պիտի գան ոչ թէ ուշ-ուշ, այլ՝ շատ ուշացած...:

Անգլիոյ Գաւաթ «Լիվերփուլ» Պարտութեան Մատնեց «Արսենալին»

Ֆուլթոնի Անգլիոյ Գաւաթի մրցաշարքի 1/32 եզրափակիչին «Լիվերփուլ» Լոնտոնի մէջ մրցեցաւ «Արսենալի» հետ: Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:



80-րդ վայրկեանին սեփական բերդը գրաւեց «Արսենալի» լեհ պաշտպան Եակոպ Բիվիորը: Աւելացուած ժամանակին հիւրերու առաւելութիւնը կրկնապատկեց քոլումպիացի յարձակող Լուիս Տիասը:

«Լիվերփուլը» դուրս եկաւ 1/16 եզրափակիչ:

«Չելսին» Ու «Ասթոն Վիլան» Հասան 1/16 Եզրափակիչ

Լոնտոնի «Չելսին» ու «Ասթոն Վիլան» հասան Անգլիոյ Գաւաթի 1/16 եզրափակիչին:

«Չելսի» 4:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Պրեսթոն Նորթ Վիչ»:

«Ասթոն Վիլան» նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ «Միտլսպրոյի» նկատմամբ:

«Թոթենհեմն» Ու «Ֆուլհեմը» Հասան 1/16 Եզրափակիչ

Լոնտոնի «Թոթենհեմն» ու «Ֆուլհեմը» հասան ֆուլթոնի Անգլիոյ Գաւաթի 1/16 եզրափակիչին:

«Թոթենհեմը» սպանացի պաշտպան Փետրո Փորոյի կողմէ շնորհիւ 1:0 արդիւնքով յաղթեց «Պարնլիին»:

«Ֆուլհեմը» 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Ռոթերհեմ Եունայթէդսին»: Կողմ հեղինակ դարձաւ ճամայքացի յարձակող Պոլի Տէ Բորտոլա-Ռիտը:

«Ինթերի» Յաղթանակը, Միսիթարեանի Կոլային Փոխանցումը

Իտալիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին առաջատար «Ինթերը» Միլանի մէջ ընդունեց «Վերոնային»: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբը յաղթեց 2:1 արդիւնքով:



13-րդ վայրկեանին Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանի փոխանցումէն յետոյ հանդիպման արդիւնքը բացաւ աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լաուտարո Մարթինեսը:

«Վերոնայի» պատասխան կողմէ 74-րդ վայրկեանին նշանակեց ֆրանսացի յարձակող Թոմաս Անրին:

83-րդ վայրկեանին Միսիթարեանին փոխարինեց չեխ յարձակող Ալեքսիս Սանչեսը:

«Ինթերի» յաղթական կողմէ աւելացուած ժամանակին նշանակեց իտալացի կիսապաշտպան Տալիտէ Ֆրաթեզին:

«Ինթերը» 48 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Եուվենթուսէն»:

«Ռեալ» Կը Փորձէ 100 Միլիոն Եւրոյով Չեռք Բերել Էրլինկ Գոլանտին

Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր, Եւրոպայի Սուպերգաւաթակիր, աշխարհի ախոյեանին ախոյեան «Մանչեսթըր Սիթիի» 23-ամեայ նորվեգիացի յարձակող Էրլինկ Հոլանտի հրաժարագինը ոչ անգլիական ակումբներու համար 100 միլիոն եւրո է, կը հաղորդէ Football Espana-ն:



Մատրիտի «Ռեալը» պատրաստ է ալքան վճարել Էրլինկ Հոլանտի համար, որը նոյնպէս դէմ է իր գործը Արքայական ակումբի մէջ շարունակելուն: Անգլիական ակումբներու համար Հոլանտի հրաժարագինը 200 միլիոն եւրո է:

Անգլիոյ ընթացիկ առաջնութեան Հոլանտը մասնակցած է 15 հանդիպման, նշանակած է 14 կոլ, կատարած է 4 կոլային փոխանցում:

Սպանիոյ Գաւաթ. Մատրիտի «Ռեալը» Հասաւ 1/8 Եզրափակիչ

Մատրիտի «Ռեալը» հասաւ Սպանիոյ Գաւաթի 1/8 եզրափակիչ: Իտալացի Քառլո Անչելոտիի գլխավորած խումբը հիւրընկալեց չորրորդ դասակարգի մէջ հանդէս եկող «Արանտինային» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:



54-րդ վայրկեանին 11-մեթրանոցէն նշանակած կոլով հանդիպման արդիւնքը բացաւ սպանացի յարձակող Խոսէ Լուն: Մէկ վայրկեան ետք Արքայական խումբի առաւելութիւնը կրկնապատկեց սպանացի կիսապաշտպան Պրայիմ Տիասը:

Աւելացուած ժամանակին հիւրերու երրորդ կոլը նշանակեց պրագիլցի յարձակող Ռոտրիկոն:

«Պարսելոնան» Հասաւ 1/8 Եզրափակիչ

Սպանիոյ Գաւաթի խաղարկութեան 1/16 եզրափակիչին «Պարսելոնան» հիւրընկալեց «Փարպաստոյլին»:

Սպանացի Չաւիի գլխավորած խումբը յաղթեց 3:2 արդիւնքով:

«Պարսելոնային» աչքի ինկան սպանացի կիսապաշտպան Ֆերմին Լոբես Մարտինը, պրագիլցի յարձակող Ռաֆինան եւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին:

«Պարսելոնան» հասաւ 1/8 եզրափակիչ:


Հայաստանի Հաւաքականը Ընկերական Հանդիպում Պիտի Կատարէ Չեխիայի Հետ



Ֆուլթոնի Հայաստանի ազգային հաւաքականը ընկերական հանդիպում պիտի կատարէ Չեխիայի հաւաքականի հետ, կը հաղորդէ ՀՖՖ-ի կայքը: Չեխիա - Հայաստան հանդիպումը տեղի պիտի ունենայ Պրահայի մէջ Մարտ 26-ին:

Ճորտըն Հենտերսոնը Կ'ուզէ Հեռանալ Սեուտական Արաբիայէն

33-ամեայ անգլիացի կիսապաշտպան Ճորտըն Հենտերսոնը կը փափաքէ հեռանալ սէուտեան «Ալ Իթիֆաքէն» եւ յոյս ունի վերադառնալ Անգլիոյ Փրեմիեր Լիկա, կը հաղորդէ Fichajes-ը: «Լիվերփուլի» նախկին աւագի ծառայութիւններով հետաքրքրուած են «Չելսին», «Նիւքասլը», «Քրիսթալ Փելասը» եւ «Ֆուլհեմը»:



Կը նշուի, որ Ճորտըն Հենտերսոնը չէ յարմարուած Սեուտական Արաբիոյ պայմաններուն, տարածաշրջաններուն ունի «Ալ Իթիֆաքի» մարզիչներուն եւ խաղցողներու հետ: Հենտերսոն նաեւ յոյս ունի Անգլիոյ հաւաքականի կազմէն մասնակցել Եւրո-2024-ին: Եւ ատոր համար կը ցանկացնէ վերադառնալ Անգլիայի առաջնութիւն:

Ընթացիկ մրցաշրջանին Հենտերսոն «Ալ Իթիֆաքի» կազմէն մասնակցած է 19 հանդիպման, կատարած է 5 կոլային փոխանցում: Transfermarkt-ը Հենտերսոնի փոխանցման արժէքը կը գնահատէ 7.5 միլիոն եւրո:

Սեուտական Արաբիոյ մէջ անոր տարեկան աշխատավարձը 40 միլիոն եւրո է: